№ 19 ՇԱԲԱԹ, 26 ՅՈՒՆՎԱՐԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 26 ՅՈՒՆՎԱՐԻ № 19

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տելեֆօն № 2—53.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.

Տպարանի տելեֆօն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ **1913** Թ. ՀԱՄԱՐ

ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, 11 ամսվանը նոյնպէս 10 ր., 10 ամսվանը՝ 9 ր., 9 ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., 7 և 6 ամսվանը՝ 6 ր., ամսվանը՝ 5 ր., 4 ամսվանը 4 ր., 3 ամսվանը՝ 3 ր., 2 ամսվանը 2 ր.: Փետրվարի 1-ից մինչև մարտի 1-ը 85 կոպ.:

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամակադրոշմ:

Հին բաժանորդներից խնդրվում է կպցնել փոխադրական բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով:

ՊՐԷՄԻԱՆԵՐ

«Մշակի» տարեկան այն բաժանորդները, որոնք 1913 թ. համար (սկսած յունվարի 1-ից) միանուագ կամ մաս-մաս վճարած կունենան 10 րուբլի բաժանորդավճարը, կը ստանան **ՁՐԻԱԲԱՐ** հետեւեալ 2 գրքերը.

1) „Մշակ" եւ հայ կինը", որի մէջ ամփոփված են 1872 թւականից մինչև 1891 թ. «Մշակի» մէջ լոյս տեսած առաջնորդողները, յօդուածները և բանասիրականները, որոնք նուիրված են կանանց հարցին ընդհանրապէս և հայ կնոջ առաջխաղացման գործին մասնաւորապէս: Գիրքը բաղկացած է 7+294 մեծադիր էջից, տպված լաւ թղթի վրա, Գր. Արծրունու մեծադիր գրաւիչ պատկերով եւ մօզայիկ-նկար շապկով—հայ կնոջ էմբլեմային պատկերով:

2) „Մշակի" քառասնամեակ" Լ. Դանիէլեանի կազմած, 1872—1912 թ.թ., 132 էջ, տպված լաւ թղթի վրա: Գրքի մէջ ամփոփված են՝ Գր. Արծրունու, Անդր. Արծրունու, Րաֆֆիի, Գ. Սունդուկեանի, Ա. Արփիարեանի, Ե. Տէր-Մարկոսեանի, Ալ. Քալանթարի եւ Հ. Առաքելեանի պատկերները:

«Մշակի» ոչ-բաժանորդների համար առաջին գիրքն արժէ 1 րուբլի, իսկ երկրորդ գիրքը՝ 50 կոպ.: Ճանապարհածախսը՝ 15—20 կոպ. գրքի վրա:

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ". Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal "MSCHAK".

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Ցոկը, Սոֆիա և Սոֆիա Մանուէլեանցները, Հայկանդուխտ և Գարեգին Մելիք-Մարութեանցները խորին վշտով յայտնում են՝ առաջինն ու երկրորդը իրանց թանգագին որդու, երրորդն իր եղբօր-որդու, չորրորդն իր սիրելի եղբօր, իսկ հինգերորդը իր աներոջ-որդու՝

Երուանդ Յակոբեան ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑԻ

մահը: Ամբիծքն այսօր, շաբաթ, երեկոյեան ժամը 6-ին, հանգուցեալի բնակարանում (Վելիամինօվսկայա փ. 22): Մարմնի յուղարկաւորութիւնը վաղը, կիրակի, յունվարի 27-ին, առաւօտեան ժամը 10-ին, բնակարանից դէպի Նորաշէնի ս. Աստուածածին եկեղեցին: Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը:

60. 2—1

Ստեփան Մկրտչեան Եարզուլեանցը խորին վշտով յայտնում է իր բարեկամի և թանգագին ու անմոռանալի գործակատարի

ԵՐՈՒԱՆԴ ՅԱԿՈԲԵԱՆ

ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑԻ

մահը: Ամբիծքն այսօր, շաբաթ, երեկոյեան ժամը 6-ին, հանգուցեալի բնակարանում (Վելիամինօվսկայա փ. 22): Մարմնի յուղարկաւորութիւնը վաղը, կիրակի, յունվարի 27-ին, առաւօտեան ժամը 10-ին, բնակարանից դէպի Նորաշէնի ս. Աստուածածին եկեղեցին: Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը:

61. 2—1

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ
ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, ՅՈՒՆՎԱՐԻ 28-ԻՆ
Բենեֆիս Յ. Աբելեանի
ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԸ
ԲԱՐԵՀԱՃ ՌԵԺԻՍՍՈՐՈՒԹԵԱՄԲ
ՌՈՒՍԱՑ ՁԱՐԵՑՆԻԻ ԴՐԱՄԱՏԻԿ ԽՄԲԻ ՌԵԺԻՍՍՈՐ Ա. ՏՈՒԴԱՆՈՎԻ
Կը ներկայացնէ առաջին անգամ հայ բեմի վրա ԱԼ. ՏՈԼՍՏՈՅԻ յայտնի ողբերգութիւն
ԻՕՀԱՆՆ ԱՀԵՂԻ ՄԱՀԸ
5 արարուածով, Թարգմ. Տիգ. Յովհաննիսեանի:
✦ Մասնակցում է ամբողջ խումբը: ✦
Սկիզբը երեկոյեան ժամը 8-ին:
✦ Տեղերի գները բենեֆիսային են: ✦
62. 2—1

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ
Կիրակի, յունվարի 27-ին, կը կայանայ
ԵՐԿՐՈՐԴ եւ ՎԵՐՋԻՆ
ՀԱՄԵՐԳԸ
Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ ՊՐՈՖԵՍՍՈՐ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ
Սկիզբն է երեկոյեան ժամը 8½-ին:
Տոմսակները վաճառվում են պ. Սուղանաճեանի մուզիկ. խանութում, իսկ համերգի օրը՝ առ. ժ. 10—2-ը և եր. ժ. 6-ից դահլիճի մուտքի մօտ:
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՖԻՇԱՆԵՐՈՒՄ ԵՒ ՊՐՕԳՐԱՄՆԵՐՈՒՄ:
(հ.շ.կ.) առ. 53. 4—3

ՀԱՏԱՎԱՃԱՌ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ
ԵՂԲ. Ա. ԵՒ Ա. ՄԻԼԵԱՆՆԵՐԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԱՆ
ԳՈԼՈՎԻՆՍԿԻ ՊՐՈՍՊԵԿՏ, ԿԱԴԵՏՍԿԻ ԿՈՐՊՈՒՍԻ ԴԻՄԱՑ:
Նախորդ տարիների օրինակով ՏԱՐԵԿԱՆ ՄԷԿ ԱՆԳԱՄ միայն
ՆՇԱՆԱԿՎԱԾ Է 7 ՕՐՈՎ
Յունվարի 19-ից մինչեւ 26-ը 1913 թ.
ՄՆԱՑՈՐԴ ԿՏՈՐՆԵՐԻ ՄԵԾ ՎԱՃԱՌՔ
ՆՈՅՆՊԷՍ ԵՒ ԱՅՆ ԲՈԼՈՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ, ՈՐՈՆՔ ՄՆԱՑԵԼ ԵՆ ՁՄԵՌԱՅԻՆ ՍԵԶՕՆԻՑ
ՄԵԾ ԶԵՂՋՈՎ
Մետաքսէ, բրդէ, մահուդէ, քաթանէ և բամբակէ ապրանքներ, սփռոցներ, վերմակներ, պլէդներ, ՊՈՐՏԻԵՐՆԵՐ և ՏԻՒԼ:
ՄԱՀՈՒԴԻ ԱՊՐԱՆՔՆԵՐ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍԱԿԱՆ ՖԻՐՄԱՆԵՐԻ:
ԱՅՍՕՐ ՎԵՐՋԻՆ ՕՐՆ Է
Ճաշի ժամանակ խանութը փակ կը լինի ցերեկվայ ժամը 2½-ից մինչև 4-ը:
առ. 33. 2—2

ԿԱՆԱՆՑ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԸ

«Մշակի» հեռագիրներից մեր ընթերցողները տեղեկացան, որ Պետական Խորհուրդը զբաղված է ներկայումս կանանց իրաւասութեան խնդրով փաստաբանական ասպարէզում:

Վերջնական քուէարկութիւնը տուել է աննպաստ հետեւանք և օրինագիծը մերժվել է: Այդ որոշումը անկեղծ վիշտ կը պատճառի առաջադիմութեան պաշտպաններին և համակրողներին:

Յետադէմ և պահպանողական տարրերը ուժեղ են Պետական Խորհրդի մէջ.

Մի շարք հռետորներ պաշտպանել են կանանց հարցը և դիմադրել այդ հարցի երդուեալ հակառակորդներին:

Զափազանց համակրելի տպաւորութիւն են թողնում Պետական Խորհրդի մէջ Կօնիի, Տագանցեվի, Շերեկօյի և միւսների պաշտպանողական ճառերը կանանց դատի օգտին:

Դա նշանակալից է և բնորոշ մեր ժամանակի համար:

Կանանց հարցը ջերմ պաշտպաններ ունի հասակն առած, ծերունի մարդկանց շրջանում, այն մարդկանց, որոնք մտաւոր իրանց սնունդը և գաղափարական զարգացումը ստացել են վաթսունական թւականների նշանաւոր և յիշատակելի շրջանում, այլ և նրանց յաջորդող ժամանակի որոշ գաղափարական թւականներին.

Ժամանակն է տալ կանանց իրաւունք պարապվել փաստաբանութեամբ և առ հասարակ իրաւաբանական գործունէութեամբ,—ասում են պաշտպանները.—եթէ առաջ բաւական հիմք չը կար այդպիսի մի արտօնութիւն տալու, այժմ, երբ կրթված կինը ցոյց տուեց իր ընդունակութիւնները մանկավարժական, բժշկական, գիւղատնտեսական և այլ ասպարէզներում, տրամաբանական է թոյլ տալ նոյնը և իրաւաբանութեան վերաբերութեամբ.

Անհիմն և անհամոզիչ են այն առարկութիւնները, որոնք բերվում են կանանց իրաւունքների ընդարձակման դէմ, նոյն հին, ծամծմած և տաղտկալի դարձած առարկութիւնները, թէ կնոջ կոչումը մայրութեան մէջ պէտք է արտայայտվի, թէ կին փաստաբանը կը լինի ջղային, կողմնապահ, թէ կնոջ համար անթոյլատրելի են որոշ դատավարական գործերում մասնակցելը և այլն:

Այդ և այդպիսի առարկութիւններ լսվել են իրանց ժամանակին նաև բժշկական և ուրիշ զբաղմունքների վերաբերութեամբ: Եւ կեանքը, իրական, անժխտելի փաստերով առատ կեանքը, հերքել է այդ առարկութիւնները և ցոյց տուել, որ կին-մարդը նոյնպէս, ինչպէս և տղամարդը, կարողացել է արժանաւոր կերպով գործել մտաւոր աշխատանքի ասպարէզներում:

Ամերիկայի և Արեւմտեան Եւրոպայի փորձը տուել է ապացոյցներ կանանց աչքի գործունէութեան և օրինակներ աչքի ընկնող կին-իրաւաբան գործողների:

Ռուսաստանում ներկայումս կայ մօտ 200 կին իրաւաբան, որոնք պատրաստ են վաղվանից գործադրել իրանց կրթութիւնը ընտրած ասպարէզում, եթէ օրէնքը դէն գցի բոլոր արգելքները և բանայ նրանց համար գործունէութեան ազատ ճանապարհ:

Կանանց իրաւունքների լայն ըմբռնման գաղափարը ընտանի է եղել ռուսական օրէնսդրութեան մէջ և, օրինակ, մասնաւոր սեփականութեան սկզբունքը կանանց վերաբերութեամբ Ռուսաստանում աւելի նպաստաւոր արտայայտութիւն է ունեցել, քան լուսաւորված երկիրներից շատերում: Նոյնպէս Ռուսաստանը առաջիններից մէկն է եղել, որ տուել է բարձրագոյն կրթութիւն ստացածների մի աչքի ընկնող բազմութիւն:

Հերթը հասել է իրաւաբանական ասպարէզում գործելուն: Եւ հասարակական կարծիքը իրաւունքների ընդարձակման կողմն է ջերմագին կերպով:

Եւ եթէ այսօր կանանց իրաւունքի հարցի դրական լուծումը մերժվեց և տապալվեց—նա նորից և նորից կը դրվի քննութեան սեղանի վրա, մինչև որ ստանայ օրինական վաւերացում:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Սեփական հեռագիր)

Սաբզուար, 24 յունվարի

Սալար ուդ-Դօվլէն ամսիս 26-ին կը մտնէ Սաբզուար:

Հայերիս դրութիւնը անյուսալի է:

Խաչատրեան

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

24 յունվարի

Թէհրան.—Ստորագրվեց պայմանագիր, որով Պարսկաստանի զեղջատու բանկը իրաւունք է ստանում կառուցանելու երկաթուղի Ջուլֆայից—Թաւրիզ, որի ճիւղը անցնելու է դէպի Ուրմիայի լճի հիւսիս-արեւելեան ափը: Գիծը ռուսական է, աշխատանքներն աւարտվելու են 6 տարում: Կոնցեսիան իր ույժը պահում է 75 տարի: Պարսից կառավարութիւնը իրաւունք ունի յետ գնել երկաթուղին 35 տարուց յետոյ, վճարելով բոլոր ծախսված գումարները տոկոսներով հանդերձ: Բանկը իրաւունք է ձեռք բերում շահագործել քարածուխի և նաւթի տեղերը երկաթուղու երկու կողմի 65 վերստ շրջագծում, նաև արտօնեալ իրաւունք՝ կառուցանելու Թաւրիզից—Ղազվին երկաթուղագիծ և շահագործելու այս գծի շուրջ եա նաւթի ու քարածուխի տեղերը: Բոլոր ձեռնարկութիւնները ազատ են ընդմիշտ պարսկական տուրքերից և հարկերից:

Բէլգրադ.—Իշխան Հօհէնլօէի Պետերբուրգ գնալու առիթով պաշտօնական «Սամօուպրավա» գրում է, թէ նա հաւաստացած է, որ աւստրիական կայսրի անմիջական դիմումը ռուսաց Կայսրին կը ծառայէ ի նպաստ խաղաղութեան, որովհետև դժուար է ենթադրել՝ թէ Աւստրիան, շատ լաւ իմանալով Ռուսաստանի վերաբերմունքը դէպի Սերբիան, կարող լինի գնալ ընդդէմ սերբերի շահերի Բալկաններում:

Սերբիական «Պրէսս-Բիւրօն» լիազօրութիւն ունի կտրականապէս հերքելու արտասահմանեան մամուլի լուրերը այն մասին, թէ սերբերը իրանց նուաճած տեղերում փակել են բուլղարական դպրոցները:

Լօնդօն. — Բէչիր-փաշան հրահանգ ստացաւ մնալ Լօնդօնում, մնացած պատգամաւորները մեկնում են Կ. Պօլիս, բացի Օսման-փաշայից, որ մեկնում է Բեռլին:

Պետերբուրգ.—Պետական Խորհուրդը 84 ձայնով 66-ի դէմ մերժեց կանանց փաստաբանական իրաւունք տալու օրինագիծը:

Մօնղօլական պատգամաւորութիւնը Պետրոս-Պօղոս տաճարում աղօթեց Ալեքսանդր III Կայսրի դամբարանի առաջ և դրեց արծաթեայ պսակ:

Պրինց Հօհէնլօէն այցելեց մինիստրների խորհրդի նախագահին և այցելութիւններ գործեց Կայսերական Գերդաստանի Անձերին:

Կէնիգսբէրգ.—Քաղաքային վարչութեան մէջ կայացած խնճոյքին կայսրը ճառ արտասանեց, որի մէջ մատնանշեց 100 տարի առաջ ազատութեան համար պրուսական ժողովրդի մղած մեծ կռւի վրա: Յիշեցնելով ընդհանուր զինւորական ծառայութեան մասին, կայսրը վերջացրեց այսպիսի խօսքերով. «Եթէ ներկայումս անհրաժեշտ երևայ ուժեղացնել այդ հիմքը ընդհանուր զինւորական ծառայութեան շրջանակներում, ես չեմ կասկածում, որ գերման ժողովուրդը իրանց պանծալի նախնիների օրինակով ուրախութեամբ պատրաստակամութիւն կը յայտնեն նորանոր զոհաբերութիւններ անելու»:

Լօնդօն.—Համայնքների պալատ: Եկեղեցին պետութիւնից անջատելու բիլլը ընդունվեց երրորդ ընթերցումից յետոյ 347 ձայնով ընդդէմ 240-ի: Լորդերի պալատը անպայման կը մերժէ բիլլը:

Բէլգրադ.—Վէնիզէլոսը «Պօլիտիկայի» աշխատակցի հետ խօսելու ժամանակ յայտնեց, թէ նա ուրախ է սերբերի սրտագին ընդունելութիւնից և Պետր Թագաւորի բարձր ուշադրութիւնից, և աւելացրեց, որ վաղեմի բարի յարաբերութիւնները երկու պետութիւնների միջև կամրապնդվեն աւելի եւս:

Տօկիօ.—Պարլամենտում Կացուրան կաբինէտի քաղաքականութեան մասին արտասանած ճառի մէջ մատնանշեց, Թէ ինչ նշանակութիւն ունի Անգլիայի հետ կապած դաշնակցութիւնը և Ռուսաստանի ու Ֆրանսիայի հետ կայացրած համաձայնութիւնը Հեռաւոր Արևելքի մշտական խաղաղութեան համար։ Ընդգծելով, որ անհրաժեշտ է խիստ տնտեսութեան հետևել, Կացուրան խոստացաւ այս տարվայ բիւջէի գործադրութեան ժամանակ յետ ձգել 50 միլիոն։ Նացիոնալիստ սահմանադրականները խստագոյն պարսաւեցին Կացուրայի գործունէութիւնը և առաջարկեցին պալատին անվստահութիւն յայտնել կաբինէտին։ Դրանից յետոյ կարդացվեց կայսերական հրաման պարլամենտի նիստերը հինգ օրով դադարեցնելու մասին։ Նիստի ժամանակ պարլամենտի շինութեան մօտ ժողովվել էր ահագին ամբոխ, որ աղմկալի բողոքում էր Կացուրայի ձեռք առած միջոցների դէմ։ Կառավարութիւնը հրաժարվեց նախագիծ ներկայացնել զօրքի կազմը 2 զօրաբանակով աւելացնելու մասին։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՏԱԳՆԱՊԸ

ՎԵՐՍԿՍՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
24 յունվարի

Սօֆիա.—Գեներալ Սավօվը հրատարակեց հետևեալ հրամանը յանուն զօրքի. «Պարզվեց, որ Թիւրքերը սխալվեցին. մեզ նոյնպէս ժամանակ էր հարկաւոր, որպէսզի կարող լինէինք այստեղ բերել մակեդոնական զօրքերը, կազմակերպէինք նորից մեծաթիւ զօրաբանակ, հնարաւորութիւն տայինք զօրքին հանգստանալ և վերջապէս հաւաքէինք ուտելիքի ու ռազմամթերքի պաշար։ Այժմ, երբ մենք միանգամայն պատրաստ ենք, աւելի պատրաստ, քան թէ պատերազմից առաջ, և քան թէ այն ժամանակ, երբ Թիւրք լիազօրները Լոնդօնում հրաժարվեցին մեզ տալ մեզ հասանելիք սահմանները,—մեզ նորից հարկաւոր է ջարդել հերհե ժողոված ու անվարժ, խառնիճաղանճ խմբերը և կուի դաշտում թելադրել հաշտութեան պայմանները։ Թոյլատրելի է, արդեօք, որպէսզի թշնամին տիրանայ այն հողին, որ ներկված է ձեր պանծալի ընկերների արիւնով։ Յիշեցէք, որ Լոզէնգրադում, Կօչանում, Բունար-Հիսարում, Լիւլէ-Բուրգասում, Չաթալջայում և Օդրինում ընկած մարտիկների հոգին ձեզ է նայում վերին բարձրութիւնից։ Կը թողնե՞ն, արդեօք, մեր հայրերը, մայրերը, կանայք և երեխաները, որպէսզի մենք տուն վերադառնանք առանց մեր հակառակորդին ծովի այն կողմը դուրս քշելու։ Նրանք իրաւունք կունենան ասելու մեզ՝ այստեղ ձեր տեղը չէ... Այդպէս, առաջ Ամենաբարձրեալի օրհնութեամբ, ու զէնքը ձեռքներիդ դէպի նոր, էլ առաւել սրբազան գործի»...

Թիւրքական գալիպօլական զօրքը յունվարի 23-ին ջարդվեց բոլգարներից Կավաք-սուի մօտերը և նահանջեց մեծ անկարգութեամբ դէպի Բուլայրու, հալածվելով յաղթողներից։ Այդ յաղթութեան պատճառով Մարմարա ծովի բովանդակ ափը՝ մինչև Բուլայրու ընկաւ բոլգարների ձեռքը։

Վէնիզէլօսը տեսակցեց Գեշովի հետ, յետոյ ընդունվեց Թագաւորից։ Երեկոյեան Վէնիզէլօսը մեկնում է Սալօնիկ։

—

Բուխարեստ. — Պատգամաւորների պալատ։ Պատասխանելով հարցին, մինիստր-նախագահը յայտնեց, թէ կառավարութիւնը չէ հրաժարվել և չի էլ հրաժարվի Սիլիստրիայից։

—

Պօդգօրիցա.—Չերնոգորական զօրքերի գլխաւոր հրամանատարը ստացաւ Սկիւտարի կոմենդանտ Էսադ-փաշայից մի նամակ, որի մէջ նամակագիրը յայտնում է, թէ նա ստացել է զինադադար կայացնելու տեղեկութիւնը, ուստի և նա խնդրում է Սկիւտար ուղարկել չերնոգորական օֆիցերներ՝ չէզոք շերտը որոշելու համար։ Գլխաւոր հրամանատարը պատասխանեց, որ տեսակցութիւնը աւելորդ է, որովհետև հէնց այսօր վերջանում է զինադադարի ժամանակամիջոցը։

Պօդգօրիցա եկաւ Նիկօլայ Թագաւորը գահաժառանգ Թագաւորազնի հետ։

—

Կ. Պոլիս. — Լուրերի համաձայն, «Մեսուդիէ» զրահանաւը ռմբակոծեց Րոդոստօն, ուր ափ է իջել Թիւրքաց մի զօրամաս Էնվէր-բէյի հրամանատարութեամբ։ Ուրիշ մի ռազմանաւ կրակ է բացել թշնամու վրա Շարքէօյում։

Յունվարի 23-ին կառավարութիւնը մտադիր է գրաւել բոլոր մթերքները քաղաքում, թողնելով նրայն 10%-ը ազգաբնակութեան համար։

Րոդոստոյից նահանջելու ժամանակ բոլգարները հրդեհել են զինւորական շէնքերը։

Պաշտօնապէս հաղորդվում է, թէ կնքվել է ներքին փոխառութիւն հողային տուրքերի երաշխաւորութեամբ։

—

Լոնդոն.—Չերնոգորական պատգամաւոր Միուշկովիչն ասաց Րէյտէրի թղթակցին, թէ Չերնոգորիան հաւատացած է, որ կը գրաւէ Սկիւտարին, որը անձնատուր կը լինի միայն կուռվ։

—

Կահիրէ. — «Համիդիէ» յածանաւը հեռացաւ Սուէցից և գտնվում է այժմ Մոխէսի աղբիւրի մօտ ու քարածուխ պաշարում։

Յունաստանի դիպլօմատիական գործակալի նոր բողոքի պատճառով եգիպտական «Աբդա» յածանաւը մեկնեց հետևելու «Համիդիէի» շարժումներին։

ՎՈՍՓՈՐԻ ԱՓԵՐԷՆ

Կ. Պոլիս, 15 յունուար

Բռնութեամբ պաշտօնի անցնող դահլիճը, որ իթթիհադական օրգաններ յեղափոխական շարժման մը ծնունդ կը համարին և կանուանեն «ազգային պաշտպանութեան դահլիճ», ուրիշ բանի մը արդիւնք չէր, եթէ ոչ վեհապետական ապուշութեան մը հետևանք։

Այլևս տարակոյս չմնաց, թէ սուլթան Մէհմէդ ոչ կիշխէ, ոչ կը կառավարէ, այլ պարզապէս կը վարուի ծիծաղելի և ամօթալի միամտութեամբ մը։

Եւ վա՜յ այն բոլոր դահլիճներուն, որոնք այսպէս՝ սեփական կարծիքէ զուրկ վեհապետի մը հեղինակութեան կռթնելու պարտաւորուած են։

Ինչ որ երէկ Քեամիլ-փաշայի դահլիճին համար ըրաւ, կրնայ վաղը ընել նաև Մահմուդ-Շէվքէթ-փաշայի դահլիճին համար, որուն տևականութեան և ոչ մէկ երաշխիք կայ։

Նազըմ-փաշայի սպանութիւնը կը սպասուէր որ բանակին մէջ իր հակահարուածը առաջ բերէ և Նազըմ-փաշայի բոլոր կուսակից օֆիցերները, որոնք երբեմն տապալեցին Մահմուդ-Շէվքէթ-փաշան, վերստին ծառանան անոր դէմ և Նազըմի արեան վրէժը պահանջեն։ Մինչև հիմա դեռ ոչ մի տեղեկութիւն չկայ։ Միայն շշուկներ կան, թէ դաւեր կը պատրաստուին սպաննելու Մահմուդ-Շէվքէթ-փաշան։ Կըսուի նոյնիսկ, թէ բանակը պահանջագիր մը ներկայացուցած է նոր վարչապետին՝ որոշ պայմանաժամի մը մէջ Նազըմ փաշայի սպաննիչը պատժելու համար, հակառակ պարագային սպառնալով Կ. Պոլսոյ վրայ քալել։

Դարձեալ կըսուի, թէ Ֆուատ-փաշա (նշանաւոր ազատական մարաջախտ, որ Համիդ աստիճանազուրկ՝ Դամասկոս աքսորած էր), Նազըմի վրէժը լուծելու համար բանակին մէջ կուսակցութեան մը գլուխ անցած է։

Ասոնք ճշմարտանման կը թուին մեզի, սակայն Թիւրք հոգեբանութեան աւելի մօտէն տեղեակ անձեր՝ բոլորովին տարբեր կը դատեն իրերն և ճակատագրական համակերպութեան մը կը սպասեն։

Այս պարագային աշխարհ փաստ մը աւելի ունեցած կրնայ ըլլալ Թիւրքիոյ ապրելու արժանի պետութիւն մը չըլլալուն, մանաւանդ Թիւրքերու վատասերման, ապականութեան, դիւցազնական ոգիէ զուրկ ըլլալուն և իրապէս փճանալու, աշխարհի երեսէն սրբուելու ազգ մը ըլլալուն։

Նազըմ-փաշա, երբ այնպիսի մէկը, որ գերազանցապէս ունէր այն, ինչ որ անձնական հմայք կը կոչուի. Նազըմ-փաշա, ըլլալով մէկը, որուն չհամակրիլ կարելի չէր. Նազըմ-փաշա, վերջապէս, ըլլալով կատարեալ ազնիւ մարդ մը, եթէ չգտնուին քանի մը անձնազոհեր, որոնք իր արեան վրէժը լուծելու չփութան, իրաւ պէտք է ըսել, թէ Թիւրքիա ապականութեան բոյն մըն է, և ազնւութեան ու անձնուիրութեան զգացումները օտար են անոր զաւակներուն։

Ասիկա վճռապէս ըսել կարելի չըլլալով, պէտք է սպասել նոր անակնկալներու։

Հետևաբար կարելի չէ ըսել, թէ դահլիճին դիրքը շատ հաստատ է։

Դարձեալ պէտք է աչքի առջև ունենալ, թէ Իթթիհադը իր վարկաբեկ վիճակէն վերականգնելու համար գեղեցիկ առիթ մը գտաւ, ազգային արժանապատւութեան խնդիր յարուցանելով և ամեն կողմ տարաձայնելով ու համոզելով, թէ առանց Էդիրնէն և կղզիները զոհելու՝ կարելի է հաշտութիւն կնքել և թէ պատերազմը շարունակելու կարելիութիւն կայ։

Եթէ պատերազմը չշարունակուի, և եթէ հաշտութիւնը կնքուի այնքան նուաստացուցիչ պայմաններով, որքան էր Քեամիլ-փաշայի ծրագրածը, այն ատեն ժողովրդային ճշմարիտ ցասման մը դէմ ալ ոևէ իսկական երաշխաւորութիւն չկայ։ Հետևաբար մէկ օրէն միւսը սպասելով հանդերձ դահլիճին անկման՝ կարժէ, որ հայերուս նկատմամբ այս նոր փոփոխութեան հաւանական հետևանքները քննութեան առնենք։

Իթթիհադի զգացումները դէպի պետութեան ոչ իսլամ ազգերը ծանօթ ըլլալով, ինչպէս նաև անոր խիստ կեդրոնացման ուղղութիւնը՝ բացայայտ, և ընդհանրապէս Թիւրք մտայնութիւնն ալ աւելորդ ըլլալով պարզաբանել, կարելի չէ ոևէ բարւոքում սպասել հայոց վիճակին վրայ։ Ընդհակառակը կեդրոնին մէջ պատահող այս յուզումները կը վախցուի, որ գաւառի մէջ գէշ ազդեցութիւն ունենան, և առաջ բերեն նոր կոտորածներ ու խառնակութիւններ։

Մանաւանդ որ Իթթիհադը շատ քաջալերած ըլլալով քիւրդերը, հաւանական է, որ անոնք այս նոր յեղաշրջումէն օգտուելով՝ Հայաստանի մէջ առաջ բերեն շփոթութիւններ և խառնակութիւններ։

Հետևաբար Թիւրքահայն Իթթիհադին ձեռք բերած դիրքէն առօրեայ վտանգի մը կենթարկուի, սակայն ինչ որ առօրեայ կեանքի ի մէջ կը կորսնցնէ, թերևս պիտի շահի հիմնական ու տևական գետնի վրայ։

Եւրոպական պետութիւնները կը թելադրէին, որ իբր գերագոյն զոհողութիւն խաղաղութեան համար՝ Թիւրքիան զիջէր Էդիրնէն և Եգէականի կղզիները՝ նման Եւրոպական Թիւրքիոյ միւս կուսակալութեանց։

Այս պահանջումն Եւրոպա իբր գերագոյն զոհողութիւն մը կուզէր որ ընէր Թիւրքիա։

Քեամիլ փաշա, փորձ ու խորագէտ աղուէս մը, եւրոպական այս պահանջումին համակերպելով հանդերձ զայն առիթ մը դարձնելու կը ջանար ի փոխարէն այս զոհողութեան—որ խաղաղութեան անունով կը պահանջուէր—ինքն ալ իր կարգին Եւրոպայէն պահանջելու կարգ մը նոր զոհողութիւններ, որոնք կը կարծուէր թէ պիտի յաջողէր ձեռք բերել, իրեն օժանդակ ունենալով Նորատունկեանի պէս ճկուն դիւանագէտ մը։

Եւրոպայէն ձեռք բերված այս զոհողութիւնը Թիւրքիոյ իսկական վերականգնումը պիտի ըլլար, և ասիկա իրապէս աւելի կարժէր, քան Էդիրնէն և Եգէականի կղզիները։

Այսպէս՝ Քեամիլ փաշայի դահլիճը պատեհ առիթէն պիտի օգտուէր, եւրոպական կառավարութիւններէն պահանջելու ի փոխարէն իրմէն պահանջուած երկու կուսակալութիւններուն, որ հրաժարին 1) իրենց քափիթիւլասիոններէն, 2) իրենց հպատակները Թէմէթթիւ (պատէնտի տուրք) վճարեն, 3) Թիւրքիա ազատ թողուն՝ իր մաքսային սակագինները աւելցնելու համար և 4), ու ամենէն կարևորը մեզի համար, Անատօլուի ամբողջութիւնը և անձեռնմխելիութիւնը երաշխաւորեն և Անատօլուի մասին ոևէ խնդիր չհանեն։

Այս իրաւունքները ձեռք բերել, իրաւ է որ, շատ աւելի կարժէր, քան ինչ որ կը պահանջէին եւրոպացիք։ Գաբրիէլ Նորատունկեան՝ ասկէ առաջ Բոսնա-Հերսէկի խնդրոյն առթիւ Աւստրիոյ և Տրիպօլսոյ համար՝ Իտալիոյ հետ կնքուած երկու պայմանագրութեանց մէջ ալ յաջողեցաւ այս երկու պետութիւններէն առնել որոշ յանձնառութիւն՝ հրաժարելու իրենց Թիւրքիոյ վրայ ունեցած իրաւունքներէն, երբ միւս եւրոպական պետութիւններն ալ հրաժարին։

Այս անգամ ալ կուզէր այս առթիւ միւսները հաւանեցնել, և Եւրոպայէն Թիւրքիոյ վտարումն փոխարինել անփոխարինելի շահով մը՝ Թիւրքիոյ տնտեսական եւ քաղաքական ազատագրութեամբ, որ իրապէս շատ մեծ նշանակութիւն ունի։

Սակայն դժբաղդաբար կամ բարեբաղդաբար՝ այսքան նրբութենէ հասկցող չկայ։ Թիւրքիոյ ողջ-ողջ մեռնիլը, տնտեսապէս փճանալը, օտարներուն՝ երկրին մէջ ընկ ներու ի վնաս վայելած առանձնաշնոր —որ վիրաւորանք մըն է պետութեան հ մար—իրենց համար կարևորութիւն չուն անոնք միայն դիակներով կը շահագրգռուի և Էդիրնէն կուզեն, վասնզի հոն թաղուա են նախկին սուլթաններու մէկ մասը։

Այս մտայնութիւնը պարզապէս ծիծաղելի է, մեզի համար, սակայն, ոչ թէ վնասակար։

Եթէ Քեամիլ փաշան հանդարտ ձգէին, եթէ անիկա յաջողէր այս ծրագիրը իրագործելու, հայկական դատը վտանգուած է վերջնապէս և թերևս սպասել հարկ պիտի ըլլար նոր առիթներու, որոնք չենք գիտեր թէ երբ նպաստաւոր պիտի ըլլային մեզի

Քեամիլ փաշայի համակերպութիւն սոսկ համակերպութիւն մը չպիտի ըլլար, այլ անիկա պիտի գնուէր մեծ յաջողութեամբ մը, որ սակայն չկրցան գնահատել Թիւրքերը։

Հետևաբար հաւանականութիւններ կան, թէ դարձեալ Անատօլուի խնդիրը հրապարակ գայ։

Մանաւանդ երբ պատերազմը շարունակուի և Կ. Պոլիս վտանգուի, հաւանական է, որ արևելեան հարցը արմատական կերպով կարգադրուի, և հայոց դատն ալ, երբ մէ մասն այս խնդրոյն, իր լուծումը գտնէ։

Թերևս աւելորդ չըլլայ գիտել տա նաև սա շատ յատկանշական պարագան։ Եւրոպա՝ շատ աւելի հաւատք ունէր Քեամիլ-փաշայի դահլիճին վրայ, քան Իթթիհադին, որուն ազգայնական միտումները ծանօթ են։ Քեամիլ-փաշա միայն խոստանալով բարենորոգում ընել՝ Թերևս յաջողէր անգամ մը ևս խաբել Եւրոպան, որ գերագոյն զոհողութիւնը պահանջած ըլլալուն համար գուցէ համակերպէր ծերունին ուրիշ կերպով մը անհանգիստ չընելու գաղափարին։ Սակայն հիմա չենք կարծեր, որ հաւատք ընծայէն Իթթիհադի խօսքերուն, և հաւանօրէն հաստատ երաշխաւորութիւններ պիտի պահանջէն բարենորոգմանց համար։

Մանաւանդ երբ պատերազմը շարունակուի և Թիւրքիա պարտուած՝ Էդիրնէն և Եգէականի կղզիները ուղղակի տայ բալկանեան զինակիցներուն առանց Եւրոպայի միջնորդութեան, այն ատեն Եւրոպա բա մը պահանջած և ստացած չպիտի ըլլայ և ինքզինք ազատ կրնայ զգալ պահանջելու Անատօլուի համար երաշխաւորութիւններ ապագային խաղաղութեան համար իբր ապահովութիւն։

Այս տեսակէտով՝ այսօրուան համա Իթթիհադին պաշտօնավարութիւնը Թէպէտ վնասակար, սակայն կրնայ վաղուան համար օգտակար ըլլալ մեզի նկատմամբ։

Շառայ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Լօնդօնում կազմվել է մի կոմիտէ՝ հայկական դատը պաշտպանելու համար դեսպանների կօնգրէսի առաջ։

—

«Köln. Zeit.»-ին հեռագրում են Բեռլինից. «Ռուս կառավարութեան մինչև այժմ բռնած դիրքը չէ հաստատում այն լուրը, թէ Ռուսաստանը մտադիր է առանձին գործողութիւնների դիմել Հայաստանի մէջ. Մենք աւելի տրամադիր ենք կարծելու, թէ կասկածելի պէտք է համարել «Algemeine Zeit.»-ի տրված այն տեղեկութիւնները, թէ Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև համաձայնութիւն է կայացել Ասիական Թիւրքիան շահագիտական նպատակ բաժանվելու իրանց մէջ»։

Կ. Պոլսի գերմանական դեսպան այցելեց ռուսաց դեսպան Գիրսին ցաւակցութիւն յայտնեց այն թիւրիմացութիւնների առիթով, որ առա բերեց նրա ճառը և Անատոլիայի մասին արտասանած խօսքերը։

ԿԻԼԻԿԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

Ջէհան, 25 դեկտեմբեր

Հայաստանի բարեկարգութեանց խնդիր որ ներկայիս Թիւրքահայ մամուլը զբաղեցնող ամենակարևոր նիւթն է, ոչ նուազ կը զբաղեցնէ նաև կիլիկեցիները, որ դեռ չեն

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԲԴՈՒԼ-ՀԱՄԻԴԻ ՄԷՄՈՒԱՐՆԵՐԸ*)

IV

Բոլգարիա

Իմ կայսերական կոմիսար Նէջիբը (Սօֆիայում) ձեռք բերեց մի հետաքրքրական դօկումէնտ։ «Չէ հասել դեռ ժամանակը,— այդպէս է գրում ռուսական դեսպանը (Զինովիէվ) իմ վասսալ Ֆէրդինանդին,—Բոլգարիան ինքնուրոյն դարձնելու համար։ Ձեր արքայական բարձրութիւնը պէտք է աւելի լաւ ժամանակների սպասի։ Ռուսաստանը այժմ չէ կարող ոչ մի խոստմունք տալ։ Ամենից առաջ պէտք էր Աւստրօ-Ունգարիայի մեծ բարեկամութիւնը ձեռք բերել» և այլն։ Ճարպիկ Նէջիբը կարող էր այդքան փող չը ծախսել այդ նամակը ձեռք բերելու համար։ Այն մասին, որ Ֆէրդինանդը Վիէննայում ևս ամեն միջոցներ գործ դրեց՝ աջակցութիւն գտնելու այնտեղ՝ Բոլգարիան Թիւրքիայից անջատելու համար, ինձ վաղուց հաղորդում էր Վիէննայի իմ դեսպանը։ Չը նայելով սիրալիրութեանը և բոլոր քծնողութիւններին մեր առաջ՝ իշխան Ֆէրդինանդին չէ կարելի վստահել։ Թող նա միայն համարձակվի Թագաւոր յայտարարել իրան։ Այդ մենք չենք կարող և չը պէտք է թոյլ տանք, եթէ չենք կամենում նսեմացնել մեր պրեստիժը, որպէս մեծ պետութեան։ Այդ դէպքում Ադրիանուպօլսի զօրքերը անյապաղ կը շարժվեն դէպի Սօֆիա։ Ռուսաստանը դեռ կը մտածի. արդեօք պէտք է միջամտել նրան։ Աւստրիան մեծ սխալ կը գործէ եթէ աջակցէ՝ նրան նրա մեծ պետական մանիայի մէջ։

V

Բոլգարիան եւ պանսլաւիզմը

Ուրիշ էլ ինչ է ցանկանում Ռուսաստանը, եթէ ոչ համասլաւոնականութեան տարածումը մինչև Բոսֆոր։ Բոլգարները միայն ռուսական այդ արշաւանքի կարապետներն են. նրանք էին և կը լինեն Ցարի հլու գործիքները։ Միայն յունական աշխարհը կարող է հակադրել սլաւոնականութեանը Բալկանների վրա։ Փառք Ալլահին, որ բոլգարները և յոյները ատում են միմեանց և անհաշտ են որպէս կրակն ու ջուրը։

Բոլգարիան ոչ միայն Ռուսաստանի, այլ և Անգլիայի պրոտեժէն է։ Միթէ ապացուցված չէ, որ բալկանեան կոմիտէտը Լօնդօնում ահագին գումարներ է ծախսում բոլգարական հրոսակախմբերին օգնելու համար, որոնք անցնում են մեր սահմանն և երկար տարիների ընթացքում խախտում են մեր սահմանագլխային շրջանների խաղաղ կեանքը։ Եթէ Բոլգարիան ֆինանսական կողմից կորստեան շեմքի վրա կանգնած չը լինէր, նա վաղուց արդէն պատերազմ կը յայտարարէր մեզ։ Պատերազմը Բոլգարիայի հետ պէտք է լինի և կը լինի։ Դեռ եօթը տարի առաջ մենք պէտք է մեր հաշիւը տեսնէինք այդ անզգամի հետ, սակայն Ռուսաստանը և Անգլիան խանգարում են մեզ իւրաքանչիւր անգամ, երբ մենք պատրաստվում ենք գնալ բալկանեան այդ կողոպտիչների դէմ։ Անգլիան և Ռուսաստանը պտտում են մեր տան մէջ ճիշդ երկու տանու մեծ մկների նման. Ֆրանսիան մի ժամանակ մեր յուսալի մկնորսն էր, որին մենք կարող էինք հարկաւոր բոպէին յարձակում գործել տալ այդ երկու անախորժ կրծողների վրա։ Սակայն Ֆրանսիայի վրա գնալով աւելի սակաւ կարելի է յոյս դնել։ Փառք Ալլահին, որ նրան փոխարինեց Գերմանիան։ Նրանց բոլորին դիմադրութիւն ցոյց տալու համար մենք կարող ենք օգտվել մեր «ազնիւ մակլէրից»։

VI

Գերմանիան եւ Ֆրանսիան Արեւելքում

Ֆրանսիացիները շատ բարկանում են նրա համար, որ ես գերմանացիներին գերադասում եմ նրանցից. դա ունի, ի հարկէ, իր հիմքերը. ինքը կայսրը հոգ տարաւ այն մասին, որ ես իմ համակրութիւնները տամ գերմանացիներին։ Դա մի մարդ է, դէպի որը պէտք է տածել յարգանք և սէր։ Նա զարմանալի մարդ է, և որպիսի բարձրութեան հասցրեց իր երկիրը։ Սակայն գերմանացին ինքն ըստ ինքեան աւելի սիրելի է, քան ֆրանսիացին։ Իր բնաւորութեամբ նա աւելի մօտ է օսմանցու. վերջինի նման նա մի փոքր դանդաղ է և ծանրաշարժ, բայց հաւատարիմ է և ազնիւ։ Գերմանացին աշխատասէր է և գործում է հետևողաբար. ֆրանսիացին նոյնպէս աշխատասէր է, բայց նա աշխատում է ոչ գերմանական եռանդով և չափազանց արդէն սպառում է իր ոյժերը անօգուտ քաղաքականութեան վրա։ Գերմանական հաստատամտութեանը ֆրանսիացիները կարող են հակադրել միայն իրանց մեծ ընդունակութիւնը դէպի ոգևորութիւնը, որը միայն շատ շուտ անհետանում է, որպէս այրվող յարդի բոցը։ Սակայն, նախ և առաջ, գերմանացին լաւ տեղեկութիւն ունի այն մասին, ինչ որ մեծ մասամբ պակասում է ֆրանսիացուն։ Այն հանգամանքը, որ մեզ, օսմանցիներիս, ֆրանսիացիները այժմ աւելի պակաս համակրելի են, բացատրվում է նոյնպէս և նրանով, որ նրանք խլեցին մեզանից Թունիսը և որ մենք չենք կարող կատարելապէս բարեկամանալ կառավարութեան հանրապետական ձևի հետ։ Ուր պակասում է միապետի գլխաւորը, չէ կարող գոյութիւն ունենալ հաստատուն կարգ։

VII

Ռուսաստանը

Եապօնացիների աջողութիւնները ռուսների դէմ մեզ մեծ ուրախութիւն պէտք է պատճառեն. եապօնական յաղթութիւնները և մեր յաղթութիւններն են։ Մեզ համար մեծ երջանկութիւն է, որ Ռուսաստանը իր աւելորդ մնացած առատ ոյժերով դիմում է դէպի Հեռու Արևելք, որովհետև պլանով թուլանում է նրա ոյժը Սև ծովի վրա։ Հէնց որ Ռուսաստանը մի փոքր կազդուրվի, նա, ի հարկէ, կրկին կը սկսի իր աշխատանքը մեր դէմ։ Քանի որ նա չի կարող Բալթիական ծովը ռուսական ծով դարձնել, նա ձգտում է Սև ծովը դարձնել ռուսական։ Դա հասկանալի է և բնական։ Ռուսաստանի գլխաւոր ջրային ճանապարհները Դնեպրը, Դնեստրը, Դոնը, իր ջրանցքների ճանապարհով և Վօլգան թափվում են Սև ծովը. ռուսական հզօրութիւնը ձգտում է դրանից հեռու գնալ՝ ջրանցքների միջոցով դէպի Միջերկրական ծովը։ Ռուսաստանի համար, շատ կարելի է, չ փազանց մեծ նշանակութիւն ունի փոք Դարդանէլի շղթաները, սակայն մեզ համար ևս կենսական հարց է մեր ձեռքում պահել ջրանցքները։ Եթէ որ մենք այս կ տում անհաշտ հակառակորդներ չը լինէինք, մենք աշխարհիս երեսին ամենալաւ բար կամները կը լինէինք Ռուսաստանի հետ։ Պետական ամբողջ կենցաղավարական եղանակով Ցարի կայսրութեան և իմ կայսրութեան միջև շատ բան նման է և հա բաղատ է. ոչ պակաս նմանութիւն կայ և երկու ժողովուրդների հէնց բնաւորութեան մէջ։ Այդ բոլորը պէտք է երկու պետութիւնները աւելի դաշնակի դարձնէին, քան ժառանգական թշնամիներ։ Դրա վրա աւելանում է և այն փոխադարձ ներգործութիւնը, որ մենք Ռուսաստանում ունենք բազմամիլիօն մահմեդականներ, այն ժամանակ, երբ Ռուսաստանը ներկայացնում է հովանաւոր օրթօդօքս եկեղեցուն իմ կայսրութեան մէջ։ («Р. В.»)

---

*) Տես «Մշակ» № 18.

մոռցած կամայականութեան, անարդար վարչութեան և հակահայ քաղաքականութեան այն բիրտ հարուածը, որ քանի մը տարի առաջ արիւնեց այս երկիրը, առանց բնաւ արդարանալի պատճառի մը, եթէ ենթադրենք իսկ, թէ ջարդի քաղաքականութիւնը, երբևիցէ և ոևէ պատճառով մը, կրնայ արդարանալ։

Կիլիկիոյ հայութիւնն ալ, նման Հայաստանի մերայնոց, պէտք ունի և կը փափաքի ապրիլ որպէս մարդ և ազատ քաղաքացի։ Իր ցանկութեան սահմանը, որ սակայն ընդարձակ չէր, և ոչ իսկ սահմանափակ կոչուելու չափ բան մը, համիդեան ըլլայ թէ սահմանադրական շրջանի տիրապետողներուն աչքին շատ բան երևցաւ, այնքան շատ, որ անոնք հայերուն պատւոյ, կեանքի և ընչից ապահովութեան տարրական այդ պահանջը մեր անբաղդ արիւնին մէջ խեղդելու ամենափոքր խղճահարութիւնը անգամ չունեցան։

Եւ սակայն հայուն ուզածը այնքան պարզ էր և տարրական…

Ահա թէ ինչու, և շատ իրաւամբ, ազգը— ըլլայ իր պաշտօնական մարմնովը, ըլլայ անպաշտօն մասերովը—բնաւ հաւատք չունի օրերս կառավարական շրջանակներու մէջ միաձայն մէջտեղ դրուած մեծասանեբորդ ժամու բարեկարգութեանց ծրագրին վրայ։

Կառավարութիւնը, դժբաղդաբար՝ իրեն համար, սորվեցուցած չէ մեզի, ինչպէս չէ սորվեցուցած ոչ ոքի, ամենադոյզն վստահութիւն ունենալ իր ծրագիրներուն, իր խոստումներուն։ Եւ յանցանքը մերը չէ, որ հակառակ մեր բովանդակ բարի և—սանկ ըսենք—«օսմանցիական» տրամադրութիւններուն՝ կը մնանք Թովմասներ, առաւել քան երբեք հաւատքէ զուրկ՝ իր մասին։ Չենք մոռցած՝ թէ ուրիշ անգամներ ալ կառավարական կամայ թէ ակամայ այդ կարգի խոստումներուն իրական գործադրութիւնն ու հետևանքն ինչ՛ր եղած են։ Աւա՜ղ, չենք կրնար մոռնալ անցեալը, իրենք ալ անշուշտ չեն մոռնար անոնք։ Ուրեմն թող ներողամիտ ըլլան, երբ ազգը իրաւամբ կը պահանջէ և կը սպասէ, որ իրենց բարեկարգութեան ծրագիրը՝ հեռու ոևէ քմահաճ ազդեցութենէ՝ հասարակաց երաշխաւորութեան տակ դրուի։

Ներքին գործոց մինիստրին բացատրականը, զոր կարդացինք անշուշտ, գաւեշտալից էր, եթէ ցաւոտ խնդրով մը ըլլար։ Հայաստանի—ծ՛ն, սխալ ըսի, Հայաստան ըսուած տեղը չկայ—«Արևելեան Անատոլուի» չորս նահանգները (Վան, Բիթլիս, Դիարբէքիր և Խարբերդ) նոյնպէս կայսրութեան միւս բարեկարգ (?) նահանգներու աստիճանին հասցնելու համար, առժամապէս (կը հասկնանք Թիւրք լեզուին տակ այս առժամապէս բառին բովանդակ իմաստը…) բարենորոգումներ ի գործ պիտի դրուին այնտեղերը՝ կառավարութեան իրեն նախաձեռնութեամբը։

Ըսել է, թէ Ասիական Թիւրքիոյ ամեն կողմը դրախտ էր և է արդէն, պակասը այդ չորսն էին, ու անոնք ալ, շնորհիւ այդ առժամեայ փառասէրին, անոնց վիճակին պիտի համնին։ Ասկէ աւելի ծիծաղելի բան ալ կ՚ըլլայ։ Արդեօք կրնանք հարցնել, թէ այդ դրախտ վիճակին հետևանքներէն էր (տըրուած ըլլալով, որ Ադանան և Հալէպն ևս այդ բաղդաւորներուն, այսինքն արդէն բարեկարգուածներուն կարգէն են) Կիլիկիոյ հայութեան չորս տարի առաջ ունեցած ջարդը։

Եթէ Հայաստանի յիշեալ չորս նահանգները ևս՝ միևնոյն միջոցին վերակերպումովը՝ Կիլիկիոյ այդ զոյգ նահանգներուն տիպար կատարելութեան պիտի հասնին, ալ գործ ունինք…։

Եւ արդէն մթնոլորտին մէջ փոթորիկներու պայթիւնի հոտ մը կայ ելեքտրականած։ 1894-ի հոտը կարծէք շնչելու ըլլանք…, եթէ այս անգամ ալ Եւրոպան հայկական խնդիրը ինքնաբերաբար քրքրելէն վերջ՝ զայն լքելու հին վատութիւնը կրկնէ։

Որքան ալ չուզենք այս կանխակալ գէշ կասկածը սնուցանել, սակայն դժբաղդ փորձերէն խրատուած՝ մինչև որ այլևս դրական բան մը չտեսնենք, հաւատալնիս պիտի չգայ։

Կառավարութիւնը, որ մէկ կողմէ ճնշուած է բալկանեան պետութեանց հետ իր բանակցութեանց առթիւ, և միւս կողմէն կարգ մը պետութեանց իր դէմ բռնած ընթացքէն գլուխը կորսնցուցածի պէս՝ ազատ թող տուած է մամուլը հայկական խնդրով զբաղուելու և թեր ու դէմ գրելու։ Բայց պէտք չէ մոռնալ ըսել, թէ առոնք, այդ գրուածքները, Թիւրքիոյ մէջ կը տարածուին, սրելով և բորբոքելով յաղթահար և վրիժառութեան ախը սիրտին մէջ, գազան բնազդով արիւնախում ամբոխին կիրքերը, որոնք եթէ օտար և շահագրգիռ պետութեանց տրամադրութեան մէջ ամենափոքր թուլացում մը նշմարեն, վայրկեան մը իսկ պիտի չյամենան կրկին ողողել մեր անբաղդ երկրին սարն ու ձորը սա «գեաւուր, խըյանէթ» հայուն արիւնով։

Պիտի կրնանք յուսալ, որ մեր բազմաչարչար ազգին պիտի խնայուի այս նոր աղէտը։ Պիտի կրնանք յուսալ, որ քրիստոնեայ Եւրոպան և—ինչու ծածկենք—մեր մեծանուն հարևան ու պաշտպան Ռուսիան լքումի և անտարբերութեան տեսարանը այս անգամ ալ պիտի չպարզեն։

Հայութեան բաղձանքը իր բնավայրին մէջ հանգիստ և մարդավայել ապրելուն մէջ կը կայանայ, բայց արդէն իսկ կը տեսնենք, թէ ինչպէս այս թշուառ և անբաղդ խնդիրը քաշքշելու, այլասերելու համար՝ օսմանեան կառավարութիւնը—որ մէկ կողմէն հայերը սիրաշահելու տղայական փորձախաղերը կը կրկնէ — Հայաստանի կացութեան նոր ծանրակշիռ վիճակը շփոթելու և խառնելու համար՝ ձեռքի տակէ ջանադիր եղած է ստեղծել «քիւրդական» խնդիր մը։

Աւելորդ է ծանրանալ կառավարութեան այս ձախող և նոյնիսկ Թիւրքիոյ տեսակէտով ունենալիք վտանգաւոր ձգտումին վրայ։ Հայկական խնդիրը, որ պատմութիւն մը ունի և քաղաքակրթութիւն մը իր կռնակին՝ հազարաւոր տարիներու կեանքով, արուեստական այդ միջոցներով չի մեռնիր, ինչպէս որ չմեռաւ ան Համիդին և երիտասարդ-թիւրքերուն մահակներուն ներքև։ Հայերուն ուզածը անհնարինութիւն մը չէ։

Բայց այդ ձգտումը ինքնին կը մնայ ոչ նուազ նշանակալից, թիւրք տրամադրութեան անուղղայ կողմերը պայծառօրէն ցոլացնող։

Ատեն մը, երբ Վան և շրջակայքը աւազակ քիւրդերու պատճառաւ պեկոծ՝ իրաւունք ունէինք սպասելու գէթ այս փափուկ օրերուն, քչիկ մը, կեղծ թէ անկեղծ ջանքով, զանոնք զսպելու և պատժելու ընթացքը պիտի ցուցադրէր կառավարութիւնը, փոխանակ ատոր, ներումի կարժանացնէ Սայիդի նման աւարկու և արիւնոտ աւազակ մը, նման Կիլիկիոյ ջարդարարներու ներողութեան, որ պարզապէս ուրիշ բան չի նշանակեր, քան ըսել իրենց, որ շարունակեն իրենց մարդակեր ընթացքը։

Եւ սպասել որ արդարութիւնը այս կերպ ըմբռնող պետութիւն մը անկեղծօրէն բարեկարգութիւն ընելու կարող ըլլայ…

Այս պարագայից մէջ եթէ տխրաւիթ պարագայ մը ցուցադրուեցաւ մեր մէջէն, Դաշնակցութեան շիլ վերաբերումն եղաւ այն, հանդէպ քանի մը անձանց, որ առոնց դէմ ունեցած իրենց մասնաւոր և հաշուած հակառակութենէն աւելի՝ իրենց հոգեբանութիւնը երևան բերաւ։

Ինչպէս գիտէք, Բ. Դուռը անպաշտօն խորհրդակցութեան հրաւիրեց Օրմանեան սրբազան, Քէլէկեան, Տաղաւարեան և Կիւլպէնկեան էֆէնդիները։ Այսքան հասարակ խնդրոյ մը մէջ իսկ Դաշնակցութիւնը չկամեցաւ իր գոյնը երևան հանելու, ժամանակ մը, երբ առաւել քան այլ ատեն, պէտք ունէինք ազգ. համերաշխութեան։

Ասոնք ոչ միայն սկսան իրենց օրգաններուն մէջ նախատել այդ պատուաւոր ազգայինները, այլ և իրենց «գիտակից»ներու ձեռամբ մինչև իսկ ակսան հեռագիրներով արատաւորել զանոնք կառավարութեան քով, որուն դէմ սակայն կը մարտնչին իրաւամբ։

Յիշեալ ազգայինք քաջութիւնը ունեցած էին սակայն Բ. Դրան մէջ իրենց կարծիքները անկախօրէն յայտնելով հանդերձ՝ յայտարարել, թէ իրենք պաշտօնական հանգամանք չունէին։ Այդպէս պիտի ընէին իրենք, եթէ կառավարութիւնը՝ փոխանակ այդ անձնաւորութեանց՝ դաշնակցականները հրաւիրէր խորհրդակցութեան։

Չէ որ այդ միջոցին ազգն ալ, պատրիարքարանն ալ, ամեն ինչն ալ իրենք պիտի ըլլային։ Կը մոռնան, դեռ շատ չէ, վերջին օսմ. մեբուսներու ընտրութեան ատեն, երբ Իթթիհադը կը թագաւորէր և իրենք ևս ամենազօր էին, ազգային ժողովոյ մէջ, պատրիարքին ներկայութեան կը պոռային, թէ պատրիարքարանը իրաւունք չունէր քաղաքական խնդիրներով զբաղելու, որ այդ միսիան իրենց կը պատկանէր, իրենց, այսինքն դաշնակցականաց։

Այդպէս ըսին այն օրը, երբ իրենցիններուն մէջէն ըլլալու կամ չըլլալու խընդիրը կար։ Յետոյ, երբ Իթթիհադը զիրենք խաբեց, անոնք չամչցան անճառելի թեթևամտութեամբ մը իրենց անարգած պատրիարքական ազգային իշխանութեան աջակցութեանը ապաւինիլ։

Մենք կընդունինք, ինչպէս միշտ, որ մեր ազգ. իշխանութիւնը պէտք է ըլլայ մեր ազգին պաշտօնական վաւերը. բայց կըրնանք հարցնել (թէև ապահով եղէք, որ պատասխան պիտի չտան), թէ ո՞րն իրաւ էր և բանաւոր։ Այնօրուան մերժածնին թէ հիմակուան ընդունածնին։

Եւ յետոյ՝ ինչ կըսէք Օրմանեան սրբազանին դէմ իրենց յամառ վերաբերումին, պարզապէս չըսելու համար, թէ խայտառակ եղած են իրենց ամբաստանութեանց մէջ։

Ինչ՞է՝ ազգային ժողովը գերագոյն արդարութեան հատուցումը բերաւ նախկին պատրիարքին, որմէ ազգը դեռ շատ բան կը սպասէ։ Այս ալ բան մըն է։

Մաղթենք միայն, որ Դաշնակցութիւնն ալ ներկայ ազգայնական և ազգ. իշխանութեան յարելու իր քաղաքականութեան գաղափարին հաստատ մնայ և իր յարափոփոխ (ըստ փչող հովին) սկզբունքով ինքզինքը միշտ ծիծաղելի դարձնելէ զգոյշ ըլլայ։

Դիտող

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅԻ» ԱՌԱՋԱՐԿԸ

Ես ստացայ Վիէննայից մի քանի շաբաթ առաջ մի գեղեցիկ հատոր՝ «Յուշարձան» գրական ժողովածու, որը հրատարակել էին Վիէննայի Մխիթարեան հայրերը՝ խմբագրութեամբ «Հանդէս Ամսօրեայի» մարմնի՝ իրանց երեք մեծ յոբելեանների առիթով, որոնք տօնվեցին 1911 թ. սեպտ. 8-ին։

Ուշի ուշով աչքի անցրի այդ մեծ հատորը, որը յիրաւի պատիւ է բերում հրատարակողներին և կարելի է ասել, թէ իրանց այդ յոբելեանների յիշատակը անմահացնելու համար ամենից լաւ միջոցն են ընտրել։

Բայց ես չեմ ուզում այստեղ ուշադրութիւն հրաւիրել այդ գործի վրայ, որը արժանի է արդարև խորին ուշադրութեան, իբրև մի գործ, ուր համախմբվել են հայ և եւրոպացի 40 բանասէրներ և հարստացրել են հայկական գրականութիւնը մի-մի հետաքրքրական յօդուածներով։ Ինչպէս ասացի, ես չեմ ուզում խօսել այս մասին, այլ ցանկանում եմ ուշադրութիւն հրաւիրել մի կէտի վրայ, որի մասին այդ գործի մէջ խօսք է արել հ. Մէնէվիշեան, այսինքն՝ մի գրական ֆոնդ բաց անելու վրայ, որը պէտք է կազմվի «Հանդէս Ամսօրեայ» ուսումնաթերթի ապահովացման համար։

Հ. Մէնէվիշեանն այսպէս է բացատրում այս միտքը «Հանդէս Ամսօրեայի կեանքը» յօդուածում (տես «Յուշարձան» եր. 63—64).

«Ազգային յիշատակարաններ կը կանգնուին, կոթողներ, յուշարձաններ, հոյակապ շէնքեր կը կառուցուին, որոնք ապագայ սերունդներուն պիտի թարգման ըլլան իրենց նախնեաց ազգային զգածման։ Բայց կը կարծենք, թէ ոչինչ նուազ փառաւոր կոթողներ կանգնած պիտի ըլլան և անոնք, որոնք՝ իրենց կարողութեան համեմատ՝ յօղորամիտ պիտի փութան հայթայթելու գրական ֆոնդ մը՝ հեռաւոր երկիրներու մէջ՝ իրենց լեզուին, բանասիրութեան, անցելոյն ու ներկային պատմութեամբ զբաղող ուսումնաթերթի մը։ «Հանդէս Ամսօրեան» իրաւունք ունի կարծելու, թէ իր 25-ամեայ կեանքին մէջ արդարապէս վաստկած է այս իրաւունքը՝ իր ապագան ապահոված տեսնելու…։ Եւ մեծամեծ զոհողութիւններու ալ կարիք չունի այսպիսի դրամագլուխ մը. եթէ 3,500,000 հայութենէն 700 հոգի միայն 100 ֆրանքի (=40 ռուբլի) լումայով մը նպաստէ այս գրական ֆոնդին, քանի մը տարուան մէջ կունենանք բաղձացեալ դրամագլուխը… Իր 25-ամեայ յոբելեանին առթիւ կը յորդորէ ուրեմն «Հանդէս Ամսօրեան» իր բարեկամներն, որ ոչ թէ իբր ողորմութիւն, այլ հայութեան գրականութեան ու անուան կանգնուի այս կոթողը. և ինքն առաջինը կըլլայ հիմնաքար դնելով՝ 1000 ֆրանկով (=400 ռուբլի) այս դրամագլխոյն… Յոյս մեծ ունինք, որ մեր հին և նոր գրասէր բարեկամներն՝ անխտրաբար՝ կը նետեն իրենց լուման այ համազգային գանձարանը»։

Որչափ յիշում ենք, այս խօսքերին ուշադիր եղաւ իր ժամանակին «Մշակի» խմբագրութիւնը և կոչ արեց ընթերցողներին իրականացնել Մխիթարեանների այս ցանկութիւնը։ Բայց հայ հասարակութիւնը մի անտարբեր աչքով նայեց այս առաջարկի վրայ, և խնդիրը մնաց իր մեռելային դրութեան մէջ։

Բայց նայած այս խնդրի կարևորութեան՝ չէր կարելի այսպէս վերաբերվել։

Մխիթարեանների «Հանդէս Ամսօրեայ» թերթը մեր այնպիսի թերթերից չէ, որի գոյութիւնը կամ չգոյութիւնը լինի անտարբեր։ Նա Մխիթարեանների ձեռքի տակ 26 տարուց ի վեր եղել է ներկայացուցիչ հայ բանասիրութեան՝ հայերի և եւրոպացիների առաջ. քառորդ դարից աւել սիրել է հայ բանասիրութիւնը նրան և նրա մէջ նկատել է խելահաս գրագէտների ժողովատեղին։ Նրա մէջ աշխատակցել են մեր ամենալուրջ բանասէրները և անձնուիրութեամբ ծառայել են նրա միջոցով հայ բանասիրութեան, աշխատել են տալ լուրջ յօդուածներ մեր հին կուլտուրայի, պատմութեան և գրականութեան վրայ, և այս եղանակով լուսաւորել են հայ անցեալից շատ մութ խնդիրներ, ինչ նրանից առաջ ոչ մի թերթ չէ արել. և եթէ երբեմն-երբեմն եղել էլ են փորձեր կողմնակի անձերից, այսպէս՝ «Փորձում», «Հայ Գրականութեան Հանդէսում», «Բանբերում», նոյնիսկ Վենետիկի Մխիթարեանների «Բազմավէպում», որոնք կամեցել են նուիրվել բանասիրութեան, բայց չեն կարողացել դիմանալ, վասնզի դժուարին է եղել ճանապարհը։ Իսկ Մխիթարեանների «Հանդէսը» չէ մտածել երբեք կանգ առնել կամ շեղվել իր ուղիից։

Արդ՝ ինչպէս հնար է մի այդպիսի լուրջ և փորձված ուսումնաթերթի հանդէպ անտարբեր գտնվել։ Ի՞նչպէս կարելի է ուշադրութեան չառնել մի հարց, որը հէնց թերթի գոյութեան հարցն է. ի՞նչպէս կարելի է չը քաջալերել Մխիթարեանների մի այդպիսի գեղեցիկ առաջարկ։

Մենք կարծում ենք, թէ ժողովրդի անտարբերութեան պատճառը այն բանում պէտք է նկատել, որ այդ թերթի ուղղութիւնը մինչև այժմ շատ քչերին է ծանօթ եղել. շատ քչերին է վիճակվել մինչև այսօր ընթերցող լինել «Հանդէս Ամսօրեայի»։ Սակայն ինչու է անծանօթ մնացել մեր հասարակութեան մի այդպիսի ուսումնաթերթ, որը այդքան գովասանք է խլում մեր գրչից։

Իմ խօսքերը իրանց ուժը չեն կորցնում սակայն։ Սրա պատճառը ես տեսնում եմ հէնց «Հանդէս Ամսօրեայի» բարձրութեան մէջ. այն հանգամանքի մէջ, որ նա միայն բանասէր ընթերցողների է յատկացված։ «Հանդէս Ամսօրեայից» ի հարկէ չէ կարելի սպասել, որ իր բանասիրական չոր ու ցամաք յօդուածներով կարողանար ընթերցողների լայն շրջանակ գտնել մեր հայերի մէջ, ժողովրդական դասակարգում, որ զբաղված է միայն կենսական հարցերով։

Հէնց այս հանգամանքը պարտք է դնում ամեն ազգասէրի վրայ, որ ձեռք տայ «Հանդէսին», ապահովէ նրա ապագան մի գրական ֆոնդով, քանի որ նրա գոյութիւնը չէ կարող պահպանել ընթերցող հասարակութիւնը։

Ասածներից չէ կարելի ի հարկէ հետևցնել այն միտքը, թէ ինչ բան ժողովրդին ուղղակի չէ ծառայում, ապա աւելորդ է, պէտք է զրկել նրան ապրելու իրաւունքից։ Քաւ լիցի։

Այդ կը լինի մի ահագին ոճիր, գործված ուղղակի հայ բանասիրութեան դէմ, հէնց հայ կուլտուրական զարգացման սրտին։ Որովհետև պատմական անցեալի քննութիւնը պիտի ծագէ, լոյս տայ մեզ, որ առաջանայ անխափան դէպի զարգացում։ Մեր անցեալ կեանքը բանասէրները պիտի դնեն մեր առաջ՝ իր լուսաւոր և խաւար կողմերով. և այսպէս՝ պիտի սովորենք ապագայի համար նոր քայլ անել։ Այնտեղ պիտի մշակվեն, պիտի ուսումնասիրվեն, քննութեան բովից անցնեն հայ անցեալ կեանքի բոլոր փուլերը և ապա ճիշդն ու հաւատարիմը պիտի մտցվեն ժողովրդական ձեռնարկների մէջ։ Այն ժամանակ կունենայ ժողովուրդը և մեր նոր սերունդը իր նախնիքների հարազատ պատմութիւնը։

Մենք, համոզված՝ մի այդպիսի ակադեմիական թերթի կարևորութեանը, համոզված՝ թէ դէպի կուլտուրական զարգացում առաջացող հայ անուան համար անհրաժեշտ է ունենալ մի բանասիրական ուսումնաթերթ, որպիսին է «Հանդէս Ամսօրեան», և վերջապէս համոզված՝ թէ այդ առաւելապէս Վիէննայի Մխիթարեան հայրերի գործն է, այստեղ անգամ մի ևս կոչ ենք անում մեր հասարակութեան, մանաւանդ հարուստ դասակարգին, որ անտարբեր չը վերաբերվեն դէպի մի առաջարկ, որը ապահովութիւն է խոստանում «Հանդէս Ամսօրեային» և կարող է խրախուսել Մխիթարեաններին իրանց սուրբ, համազգային գործի մէջ։ Կրօնական խտրութիւններ չը պէտք է կապեն մեր ձեռքերը, այլ գաղափարի սրբութիւնը պէտք է հրապուրէ մեզ դէպի գործը։

Արդ՝ ես առաջարկում եմ, որ հայութիւնը, երբ խորհում է տօնել հայ տպագրութեան և տառերի գիւտի մեծ յոբելեանները, յաւերժացնէր այդ կրկին յոբելեանները՝ տալով ազգին ապահովված մի ուսումնաթերթ։ Նա մի այսպիսի ձեռնարկութիւնով կապված կը լինէր ապագայ դարերի համար մի հայկական ակադեմիա, որի արդիւնքը կը լինէր անսպառ, և որ կարող էր նաև իր կարգին քաջալերել բանասէր նոր ույժերին։ Դա «Հանդէս Ամսօրեայի» կոչումն է։

Ի դէպ՝ յիշեցնեմ մի դէպք էլ և պիտի վերջացնեմ իմ խօսքը։ Ի՞նչպէս են անում նման դէպքերում ուրիշ կուլտուրական մեծ ու փոքր ազգերը։ Բանասիրական ոչ մի թերթ ոչ մի տեղ անհատական հաշւով չէ տպագրվում։ Կամ քաղաքը իր գանձարանից է ծածկում ծախսը, և կամ մի որոշ ընկերութիւն իր հաշւով տպագրում։ Քանի մեզանում գոյութիւն չունի ոչ քաղաքային գանձատուն, և ոչ էլ մի գիտական ընկերութիւն, որ յանձն առնէն մի բանասիրական թերթի հրատարակութիւնը, գործը մնում է հայ հասարակութեան ուսերի վրայ։

Եւ ինչպէս երևում է հ. Մէնէվիշեանի խօսքերից, շատ մեծ դրամագլուխ էլ չէ պահանջվում մի այդպիսի գործի համար, մի 40—50,000 ֆրանկ կամ 16—20,000 ռ. գումար կարող է արդէն ծածկել մի ամսաթերթի տարեկան ծախսը և ապահովել նրա ապագան։

Ով սիրում է գործի սրբութիւնը, թող չը խնայէ «Հանդէս Ամսօրեային» իր լուման, ինչքան փոքր էլ լինի*)։ Գ. Ա.

ԿԵԱՆՔԻ ՑԱՒԵՐԻՑ

I

Յետադարձ հայեացք

Անցեալ տարվայ սկիզբներին էր, երբ ես սկսեցի գրել «Կեանքի ցաւերից» ընդհանուր վերնագրի տակ մի շարք՝ կեանքից վերցրած յօդուածներ, բայց մի քանի ձախողակի հանգամանքներ խոչընդոտ հանդիսացան, և ես ստիպված եղայ առ ժամանակ ընդհատելու։ Եղան անհատներ, որոնք իմ լռութիւնը զանազան աներևակայելի պատճառների հետ կապեցին, այդ առիթով մի քանիսը նոյն իսկ ակնարկեցին ինձ, և նոյն իսկ մի քանի նամակներ ստացայ։

Բայց իրօք չը կան այդպիսի ենթադրելի պատճառներ, և իմ լռութեան գլխաւոր պատճառը մեր իրականութեան քար լռութիւնը, մեր անտարբերութիւնը և երեսի վրայ բոլորովին այլ հայեացքով նայելն էր։

Երբ մարդ տեսնում է, որ սևով սպիտակի վրայ գրածը հէնց այդպէս էլ սևով սպիտակի վրայ գրած է մնում, երբ տեսնում է բարձրացրած ձայնը, նոյն իսկ աղաղակը անկարող է լինում գէթ մի քայլ տեղից շարժելու դարերի անշարժութիւնից տեղում մնացած ժայռը, դէպի վեր բարձրացած ձեռքերը իրանք իրանց անօգնականօրէն կախ են ընկնում, ձգվելով դէպի մայր հողը, որի մէջ վերջին հանգստի կայանն է սպասում իր սառը գրկով։

Ուշի ուշով հետևելով մեր իրականութեանը և քննելով նրա մէջ յայտնված գործունէութիւնը, մենք տեսնում ենք, որ չը նայած տարիները անկանգ սլանում են, բայց իրանց արագութեան հետ բերած թարմութիւններից համարեա ոչ մէկն էլ չեն թողնում, որ արմատակալի, կամ աւելի շուտ մենք ինքներս չենք կարողանում բռնել այն այնպիսի ձեռքերով, որ ունենայ մշտականութիւն, որ որպէս օգտաւէտութիւն մնայ մեր առաջ և աւելի լայնացնի գործունէութեան սահմանը։

Անցնում է հին տարին, գալիս է նորը, և բոլոր լաւատեսները սրտի թրթիռով գալիս են աւետելու, որ ահա եկաւ այն տարին, այն երջանիկ թիւը, երբ մենք թօթափելով դարաւոր թմրութիւնը, մաքրելով փոշու հաստ շերտերը՝ կանգնելու ենք վեհօրէն, առանց այլ ևս դառնալու դէպի հինը, դէպի այն բոլորը, որոնք միայն կաշկանդումներ են առաջացնում։ Բայց երբ տարին հանգչում է իր վախճանին, լաւատեսները մնում են գլխիկոր, նկատում են իրանց մտածումների սխալ ընթացքը և էլի յոյսները նոր եկող տարվայ մէջերին կուտակում էլ աւելի վառ ցանկութիւններով, էլ աւելի վառ երազներով։

Բայց անցնում է այդ տարին էլ և իրականութեան մէջ եղած դեֆեկտները, որոնց վերացումն է սպասվում, մնում են էլի այնպէս, նոյնպէս անշարժ և նոյնքան վերացման կարիքը զգացող, ինչպէս և նախկին տարին։

Իրականութեան մէջ շատ հազուագիւտ կերպով յայտնվում է լուծման վերջին հարցին մօտեցող մի գործ, ճիշդ այնպէս, ինչպէս 75 տարին մէկ անգամ երևացող և հետաքրքրութիւն շարժող Հալլէյի գիսաւորը. բայց երբ հարցը լուծվում-վերջանում է և անցնում է մի առժամանակ ու մենք մի յետադարձ հայեացք ենք դարձնում նրա վրայ, զգում ենք, որ այն, ինչ որ արել ենք, այդպէս չը պէտք է արվէր, որ մենք մեր գործունէութեան մէջ չարաչար սխալվել ենք, որովհետև այն բոլոր սպասելիքները, որոնք բարդվում են լուծված հարցի վրայ, չեն իրականանալու՝ հարցի լուծման անկատարութիւնից, և բոլորս էլ զգալով մեր սխալը՝ մեր հոգու խորքերում զղջման ձայն ենք լսում, բայց արդէն, ինչպէս ասում են, «անցեալն էանց», կորածի վերադարձման յոյսը ի զուր։

Եթէ մեր բոլոր ջանքերը բոլորովին ի զուր չեն կորչում, գոնէ շօշափելի արդիւնք էլ չեն հասցնում։

Բայց եթէ այդպէս ուշ-ուշ երևացող և իրականութեան մասնիկը դարձող իրողութիւնները իրանց լուծման սխալ ընթացքով գային գոնէ զգուշացնելու մեզ ապագայի համար, այդ դէպքում էլ պէտք էր շնորհակալ լինել, ճիշդ այնպէս, ինչպէս Տուրգենևի աղքատն է արտասանում այդ խօսքերը իրան ոչինչ չը տուող, բայց ձեռքը ուժգին սեղմող պարոնին։

Սակայն այդ յոյսն էլ ի դերև է լինում։

Գալիս է նորը, ու նա էլ նոյնպիսի լուծման է ենթակայ լինում, ինչպէս և առաջինը, ինչպէս հինը. կարծես այդ ձևով առաջնորդվելն ու յետադայում միայն սխալն ըմբռնելը մեր ազգային կեանքի անողոք դոգման է կազմում, և թւում է դրանից ազատվելու հնարաւորութիւնից բոլորովին զրկված ենք։

Թւել այդպիսիները՝ անտեղի կը լինէր, որովհետև իրականութեանն ու կեանքին հետևողը անշուշտ նկատել է և համոզվելով հանդերձ ըմբռնել է սխալը և այդ սխալը առաջացնող պատճառները։

Եւ ի վերջոյ մարդ կամենում է ձեռքով շարժել ամենի վրայով, այնքան զուրկ է մեր կեանքը մխիթարականութեան թեթև հիւլէից անգամ։

Արշալոյս Տէր-Յովհաննեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Ներկայումս Թիֆլիսումն են գտնվում Քութայիսի, Երևանի, Գանձակի և Բագուի նահանգապետները, որոնք Թիֆլիսի նահանգապետի մասնակցութեամբ մշակում են նոր կանոններ յիշեալ նահանգների կառավարութեան համար։

◆ Թիֆլիսի հայ հոգևորականութիւնը ի նկատի ունենալով թեմի կառավարիչ Եփրեմ եպիսկոպոսի 8-ամեայ բեղմնաւոր ծառայութիւնը յօգուտ եկեղեցու և ազգի, որոշել է մատուցանել նորին սրբազնութեանը ուղերձ և արժանավայել նուէր։

◆ Գորու եպիսկոպոս Անտոնիի նախագահութեամբ տեղի են ունենում խորհրդ դակցութիւններ այն հարցի մասին, թէ ինչպէս գործադրել կեանքում գիւղացիների պարտադիր յարաբերութիւնները կալուածատէրերից վերացնող կանոնները Թիֆլիսի, Քութայիսի, Երևանի, Գանձակի և Բագուի նահանգներում։

---

*) «Մշակի» խմբագրութիւնը սիրով յանձն կառնէ հաւաքել այդ նպաստները և ուղարկել Մխիթարեաններին։ Խմբ.

◆ Վաղը Թիֆլիսի քաղաքագլուխը, ձայնաւորները և համալսարանական մասնաժողովի անդամները հրաւիրված մի քանի գործիչների հետ կայցելեն Նաւթլուղ պոլիտեխնիկումին յատկացված հողաբաժինը դիտելու նպատակով։

◆ Ջութակահար Յ. Նալբանդեանը Բագուում աջողութեամբ համերգ տալուց յետոյ, վերադառնում է Թիֆլիս, որտեղ նա կը տայ իր երկրորդ համերգը վաղը, կիրակի, Արտիստական Ընկերութեան դահլիճում։ Համերգի ծրագիրը բոլորովին տարբեր է առաջին համերգի ծրագրից։

◆ Սղնախի գաւառապետ Ալգաւովը և Բօրչալուի գաւառապետ Բօբրօվսկին տեղափոխվում են մինը միւսի տեղ։

◆ Թոքախտի դէմ Մաքառող Կովկասեան Ընկերութեան Վարչութիւնը որոշել է կազմակերպել հակաթոքախտային ցուցահանդէս Թիֆլիսում Մեծ Պասի 6-րդ և 7-րդ շաբաթներում, որի մասին արդէն հաղորդված է Մօսկվա՝ բժ. Բլիւմէնտալին։ Ցուցահանդէսը կազմակերպելու համար ընտրված մասնաժողովը բաղկացած է բժիշկներ Վեսէլօվզօրօվից, Մուխարինսկիից, Լ. Մօնինից և իշխանուհի Մարիամ Թումանեանից։

◆ Թիֆլիսի ոստիկանապետ գեներալ Զասիպկինը յայտարարում է ոստիկանութեան անունով. «Ուշադրութիւն եմ դարձրել, որ ինձ ենթակայ ոստիկանութեան պաշտօնեաները երևի մոռանում են իմ հրամանները՝ թէ անհրաժեշտ է նրանց առանձնապէս կոռէկտ ու յարգանքով լինել իրանց յարաբերութիւնների մէջ բնակիչների հետ, ըստ որում դժբաղդաբար ես ստանում եմ բողոքներ ոստիկանական պաշտօնեաների թերի քաղաքավարի ու թերի կոռէկտ վերաբերմունքի մասին։ Առաջարկում եմ պրիստաւներին՝ նրանց անձնական պատասխանատուութեամբ՝ պահանջել կատարումն իմ կտրուկ հրամանի, նախազգուշացնելով, որ ես խախտողներին կարող եմ նոյնիսկ արձակել իրանց պաշտօններից»։

◆ Օդեսայից «Баку»-ին հեռագրում են, որ Օդեսայի դատաստանական պալատի աւագ նախագահ Խլօդօվսկին արդարադատութեան մինիստրը առաջարկել է պաշտօնով տեղափոխվել Թիֆլիս Լագօզայի փոխարէն, որ նշանակվում է Օդեսայում։

◆ Ստացանք Գարեգին Մելիք-Մարութեանից 25 րուբլի, որ նուիրում է Ներքին-Ագուլիսի հայոց ծխական դպրոցին՝ իր հանգուցեալ անհրոջ-որդի Երուանդ Մանուէլեանցի դագաղի վրա պսակ դնելու փոխարէն։ Յիշեալ գումարն այսօր փոխադրեցինք Վերին-Ագուլիս՝ Մ. Նուանուեանցի հասցէով՝ յանձնելու յիշեալ դպրոցի հոգաբարձութեան։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը որոշեց Րօմանովեան կոչել Հալաբարի 3-րդ վրացական տարրական դպրոցը, կայարանի մօտ գտնվող ռուսականը և Պուշկինեան I հայկական դպրոցը։

◆ Թիֆլիսի քաղ. վարչութիւնը որոշեց վաճառել Փիթօյեանների ընկերութեան 480 փայերը հատը 355 րուբլով։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը որոշեց այսուհետև առևտրական-տնտեսական ստորին գործակալների պաշտօնները ստանձնողներից պահանջել պրօգիմնազիայի կրթութիւն։ Իսկ դրամահանգանակող ծառայողներից վերցնել 200 րուբլի գրաւական։

◆ Այսօր 1-ին կանանց գիմնազիայում Սնարսկին բարեգործական նպատակով կը կարդայ դասախօսութիւն վիպասան Ջէկ Լօնդօնի մասին։

◆ Յունվ. 24-ին, գիշերվայ ժ. $1^1/_2$-ին, Արտիստական Թատրոնի դռան առաջի սալայատակի վրա, երբ հասարակութիւնը ցրվում էր, Ստեփան Րաֆ. Խօջայեանը, որ ժամանակաւորապէս ապրում է «Վէտցել» հիւրանոցում, խանդոտութեան հողի վրա գրպանի դանակով վէրք հասցրեց դուրս եկող իր կենակից Թիֆլիսեցի Լիդիա Պօդնեակօվային, որից յետոյ նա խնդրեց 9-րդ քաղաքամասի պրիստաւի օգնականին ձերբակալել իրան։

◆ Կայսերական Կովկասեան Բժշկական Ընկերութեան շինութեան մէջ երեխաների համար այսօր, երեկոյեան ժամը 4—5-ը, տ. Ազբիտնօվան կը կարդայ դասախօսութիւն «Վիլհէլմ-Տէլլի» մասին։ Վաղը, կիրակի, առաւօտեան ժամը 12—1-ը հասակաւորների համար բժ. Աղասարեանը կը կարդայ հայերէն մարդու կազմուածքի մասին։ Երեկոյեան ժամը $5^1/_2$—$6^1/_2$ նոյն նիւթի մասին կը դասախօսէ ռուսերէն բժ. Ֆլօրինան։

◆ Այսօր, երեկոյեան ժամը 8 ին, Հասարակական ակումբում Լ. Շանինը կը կարդայ ռեֆերատ «Մեծ մարդկանց կրթութիւնը» թեմայով։ Ռեֆերատից յետոյ կը կայանայ պըոյց, իսկ վերջը՝ տարեկան ժողով։

◆ «Г. К.»-ն հաղորդում է, որ Թիֆլիսի նահանգապետը յունվ. 22-ին յանձնեց 3-րդ Պետական Դումայի նախկին պատգամաւոր Ֆ. Տիմօշկինին Բարձրագոյնս պարգևած Թագաւոր Կայսրի լուսանկարը։

◆ Յոբելեանական ողորմածութիւնները վերաբերելու են բոլոր վարչութիւնների՝ առանձնապէս զօրքի և պօստի ծառայողներին։ («Г. К.»)

◆ Բագուի քաղաքագլուխ Մարտինօվը հաստատեց Դ. Յարութիւնեանին Բագուի քաղ. վարչութեան անդամի պաշտօնում առաջիկայ քառամեակի համար։

◆ «Пр. Край» թերթում կարդում ենք, որ դերասան Յ. Աբէլեան խնդրել էր Նոր-Նախիջևանի քաղ. վարչութիւնից տալու կապալով քաղաքային թատրօնը՝ ապրիլի 15-ից մինչև 21-ը հայկական ներկայացումներ կազմակերպելու համար։ Վարչութիւնը արգելք չունի, միայն որոշել է խմբից վերցնել 15 ր. իւրաքանչիւր ներկայացման համար։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂ ԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Ամլութեան անէծքը

Այսպէս է կոչված Օստրօվսկիի նոր պիէսը—«Проклятіе безплодія».

Դա նոր պիէս է և առաջին անգամն է խաղացվում Թիֆլիսում։ Նա շօշափում է կենսական գծեր ժամանակակից բարքերից և տրամադրութիւններից և հետաքրքրում է նայողին։

Պիէսը չունի խոշոր դրամատիկական տարր և նրա մասերը համահաւասար կերպով չեն մշակված. այնուամենայնիւ նա իբրև բէալ կեանքի երևոյթների լուսաբանութիւն՝ գոհացնում է հանդիսականի հետաքրքրութիւնը։

Նրա նիւթը ընտանեկան սրբութեան և ամուսնական հաւատարմութեան խնդիրն է։ Ներկայացումը տրվեց ի նպաստ դերասանուհի Սերգէեվայի, որը ստացաւ երկու ծաղկեփունջ։ Լաւ էին իրանց դերերում Բելեաեվ, Պավլօվ, Արդարօվ, Արկադիեվ, Մանուլլօվա։

Սիրող

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Հայոց բառ ու բան, Սահակ վ. Ամատունի, Էջմիածին, 1912 թ., էջ Ի+707.

Լոյս տեսաւ Էջմիածնի միաբան Սահակ վարդ. Ամատունու «Հայոց բառ ու բան» աշխատասիրութիւնը, տպված Էջմիածնում 1912 թվին, Պօղոս Ղուկասեանի ծախսով։

Այս աշխատութիւնը, որին տարիներից ի վեր հետաքրքրութեամբ սպասում էին հայ բանասիրութեամբ զբաղվողները, մի ընդարձակ գործ է, բաղկացած Ի+707 մեծադիր երեսներից, ըստ բավականի մաքուր տպված՝ ազնիվ թղթի վրա։ Նա պարունակում է մօտավորապէս 8000 նոր բառ, կամ բառերի նոր նշանակութիւններ, որոնք ուրիշ բառարանների մէջ դեռ չեն մտած։ Այս բառերն և նշանակութիւնները աշխատասիրող հեղինակը խնամքով տարիների ընթացքում հավաքել է բազմաթիվ գրական (գլխավորապէս ազգագրական բովանդակութեամբ) աղբիւրներից և մասամբ բուն ժողովրդի բերանից։ Ամեն մի բառի մօտ նշանակված են այն գավառները, որտեղ նա գործածական է. եթէ բառը զանազան գավառներում տարբեր արտասանութիւններ ունի՝ այս վերջիններն էլ նշանակված են, դարձեալ ցոյց տալով գավառները։ Գրեթէ ամեն մի բառի բացատրութեան հետևում են մի կամ մի քանի օրինակներ, մեծ մասամբ քաղված գրքերից, իսկ երբեմն աշխատասիրողից կազմած։

Այս աշխատութիւնը առաջին լուրջ փորձն է հայոց կենդանի ժողովրդական լեզվի լիակատար և համեմատական բառահաւաքութեան, որ ոչ միայն մեծարժէք բառամթերք է մատակարարում մեր գրական աղքատ լեզվին, այլև առատ նիւթ է տալիս մեր բարբառների ուսումնասիրութեան համար։

Այս գնահատելի աշխատութեան մասին ուրիշ անգամ մանրամասն կը խօսենք, ցոյց տալով նրա առավելութիւններն ու թերութիւնները։ Ներկայումս բավականանում ենք այս հակիրճ տեղեկութիւններով և շնորհակալութիւն ենք յայտնում մեղվաջան աշխատասիրողին այս գեղեցիկ նվէրի համար, որ նա դրեց հայ բանասիրութեան սեղանի վրա։

Ստ. Մ.

ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1) «Ամերիկահայ տարեցոյցը 1913 թ.», Մուշեղ արքեպիսկոպոսի, պատկերազարդ, Բոստօն, 1913 թ., էջ 479։ 2) «Հայունի տարեցոյցը», Սահակ-Մեսրոպի, պատկերազարդ, Կ. Պոլիս, 1913 թ., էջ 368, գինը 20 ղրուշ։ 3) «Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայէթները», Ա—Դօ-ի, Երևան, 1912 թ., էջ 406, գինը 1 ր. 20 կ.։ 4) «Գործնական ձեռնարկ շերամապահութեան», Յովհ. Պետրոսեանի, Թիֆլիս, 1912 թ., էջ 56, գինը 20 կ.։ 5) «Կռիւը գիտութեան ու կրօնի մէջ», Յակոբ քահ. Բարեջանեանի, Բոստօն, 1912 թ., էջ 89։ 6) «Ինչ է կրօնը և ինչ է բարոյականութիւնը», պրօֆ. Ռադէի, Թարգմ. Գալուստ., Թիֆլիս, 1913 թ., էջ 46, գինը 15 կ.։ 7) «Աւերակների վրա», Շիրվանզադէի, դրամա 4 արար. և 5 պատկերով, Թիֆլիս, 1913 թ., էջ 100, գինը 50 կ.։ 8) «О двухъ докладахъ директора Александроп. ком. училища Леона Давид. Саркисяна», I. Ѳ. Тиграновъ, Петербуръ, 1912 г., стр. 71. 9) «Wesen und Geschichte des Ausländertums in Russland», Inaugural-Dissertation von B. Ischchanian, Berlin, 1912, 59 էջ. 10) «Die ausländischen Elemente in der russischen Volkswirtschaft» von dr. phil. B. Ischchanian, Berlin, 1913, XVIII+300 մեծադիր էջ. 11) «Գրիգոր Արծրունի», Թռուցիկ կենսագրութիւն, կեանքի և մահվան նշանաւոր մոմենտներով, պատկերազարդ, հրատար. «Աղբիւր-Տարազի», Թիֆլիս, 1912 թ., էջ 9, ձրի յաւելուած «Տարազի»։ 12) «Աւետիք Արասխանեանց», ինքնակենսագրութիւն, պատկերազարդ, հրատարակ. «Աղբիւր-Տարազի», Թիֆլիս, 1912 թ., էջ 8, ձրի յաւելուած «Աղբիւր-Տարազի»։ 13) «Տուբերկուլեօզ և նրա դէմ կռուելու հանրամատչելի միջոցներ», բժկ. Գ. Մեհրաբեանցի, Թիֆլիս, 1913 թ., էջ 56, գ. 30 կ.։ 14) «Կանոնադրութիւն հայոց հրատարակչ. Նուէր Մանուկներին ընկ.», Թիֆլիս, 1913 թ., էջ 16։ 15) «Уставъ армянск. издательск. общ. Нверъ Манукнеринъ (подарокъ дѣтямъ)», Թիֆլիս, 1913 թ., էջ 16։ 16) «Ատենագրութիւնք ազգ. ժողովոյ», նիստ Ժ., 7 սեպտ. 1912 թ., Կ. Պոլիս, 1912 թ., էջ 127—142։ 17) «Գրացուցակ կրօն., բարոյ. և դպրոցական հրատարակութեանց Բայբլ-Հաուզի», Կ. Պոլիս, 1912 թ., էջ 12։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բագու, 23 յունվարի

Տարոյս փետրվարի 13-ին լրանում է դերասանուհի տ. Փառանձեմի բեմական գործունէութեան 30-ամեակը։

Յոբելեանական մասնաժողովը ցանկանալով պատւել հայ բեմի դերասանուհու արգասաւոր գործունէութիւնը՝ որոշել է հրապարակական տօնախմբութեամբ պատւել նրա գործունէութեան 30-ամեակը, որի համար Բագւում ներկայ փետրվարի 13-ին, եղբարք Նիկիտինների ցիրկ-Թատրօնում տեղի կունենայ յոբելեանական հանդիսաւոր ներկայացում։

Մասնաժողովս տեղեկացնելով այդ մասին յարգանօք խնդրում է մասնակցել յոբելեանական հանդիսին դրամական նուիրաբերութիւններով, շնորհաւորանքներով, ուղերձներով և հեռագիրներով։

Հասցէն՝ Շ. Թումանեանին, Բիրժևայա և Գօգօլի փող. անկիւն, սեփական տունն։

Նախագահ յոբելեանական մասնաժողովի՝
Տ. Պողովեան
Պատուաւոր անդամ՝ տ. Հրաչեայ
Քարտուղար՝ Ա. Բարութչեան։
Անդամներ՝ տ. տ. Այվազեան Ա., Յակովբջանեան Լ., Բուդաղեան Ա., Ղոնեան Ա., Տէր-Յովսէփեան Ա., Թումանեան Պ., Թումանեան Շ., և պ. պ. Արիստակեան Ս., Սաաքեան Ար., Զարիֆեան Յ., Կարա-Միրզա Պ., Թաղիանոսեան Ա. և Շահխաթունի Ա.։

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Ճեպընթաց հեռագիրը Կ. Պոլսից տեղեկացնում է, որ Թիւրքաց կառավարութիւնը Էնվէր-բէյի և Շուքրի-փաշայի պահանջով վճռեց շարունակել պատերազմը։

◆ Ամենափայլուն կերպով պսակվեց բօլգարական ֆինանսների մինիստր Թօդօրօվի արտասահմանեան ճանապարհորդութիւնը։ Ռուսաստանը և Ֆրանսիան խոստացել են խոշոր գումար տալ Բօլգարիային փոխարինաբար։

◆ «Н. В.»-ի թղթակիցը հաստատ տեղեկացել է, որ Գերմանիան եռանդով սկսել է պաշտպանել Ռումինիայի պահանջները բօլգարական կաբինէտի առաջ։

◆ Չաթալջայում թիւրք զօրքերի վիճակը ողորմելի է։ Զինւորները զըրկանքների մէջ են։ Նրանց մէջ տարածված են զանազան տարափոխիկ հիւանդութիւններ, ամեն օր գնացքներով հիւանդներին Կ. Պոլիս են բերում։ Կարելի է վստահ ասել, որ բոլոր զօրքը թշնամաբար է տրամադրված դէպի երիտասարդ-թիւրքերը։

◆ Պետերբուրգի դիւանագիտ. շըրջաններից տեղեկացնում են, որ պրինց Հօհենլօէի Աւստրիա վերադառնալուց յետոյ կը սկսվեն աւստրիական զօրքերի զինաթափումն ռուսական սահմանում։ Պատերազմից յետոյ տեսակցելու են մինիստրներ Բերխտօլդը և Սազօնօվը Բալկաններում երկուստեք ազդեցութեան շրջանները որոշելու համար։

◆ «Temps»-ը հաղորդում է, որ Սկիւտարի ամրութիւնների վրա իջեցրել են մահիկը և կախել են ալբանական դրօշակ։

◆ Կ. Պոլսում երիտասարդ-թիւրքերի սկսած հանգանակութիւնը՝ պատերազմի շարունակութեան համար՝ վիժեց, չը գտնելով համակրանք ազգաբնակութեան մէջ։

◆ Լոնդոնում խօսում են, որ շուտով Վիլհէլմ կայսրը ձեռնարկելու է ճանապարհորդութեան դէպի Պաղեստին գերմանական նոր շուկաների համար հող պատրաստելու մտադրութեամբ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

24 յունվարի

ԳՐՕԶՆԻ։ Ախվերդօվի նաւթահորերում 265 սաժէն խորութիւնից ահա երրորդ օրն է խփում է ֆօնտան, տալով օրվայ մէջ աւելի քան 50,000 պուդ նաւթ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պետական ուսումնարանական շրջանի հոգաբարձու կոմս Մուսին-Պուշկինը նշանակվեց ներկայ լինելու սենատում։

Սենատը անհետևանք թողեց Տօմսկի համալսարանի նախկին պրօֆեսոր Մալինօվսկիի վճռաբեկ գանգատագիրը, որին նահանգական դատարանը 129-րդ յօդուածով դատապարտել է մի ամսով բանտարկութեան «Արիւնալի վրէժ ու մահվան պատիժ» գրքի համար։

Փակվեց համառուսական բօրսային համագումարը։

Անցեալ տարիների նման մամուլի արտադրութիւնների ցուցահանդէսը կը բացվի փետրվարի 17-ին և կը տևէ մինչև ապրիլի 14-ը։

ՎԻԷՆՆԱ։ Լեհական լրագիրները հաղորդում են, որ Կայսրը յանձնարարեց մինիստր Բիլինսկիին նպաստել շուտով վերացնելու լեհերի և ուկրայնցիների փոխադարձ վէճերը։

ՄՕՍԿՎԱ։ Ռէպինի պատկերը վերանորոգվում է։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՉԸ ԿՐԿՆՎԵՑ

Այժմ, երբ 6 ամսից աւելի է անցել Ձեր պրէպարատը գործադրելու օրից և իմ հիւանդութիւնն էլ ոչ մի անգամ չէ կրկնվել, ես համոզվեցի «Դ-ր Մէյէրի Ստօմօկսիդէնի» բուժիչ և նրա դրական ներգործութեան մէջ։ Մինչև օրս իմ ստամոքսը գործում է լաւ, փորի ուռածութիւնը անցել է և կարողանում եմ համարեա թէ ամեն ինչ ուտել։ Ձեր բարեկամ Իօսիֆ Բոխին։ Մարիուպօլ, Միտրօպ. փ., տ. Խազանջիի։

«Գովասանական գրութիւններ չեն կրկնվում։ Ամեն օր—նոր»։

ԴԵՂԱՏՈՄՍԸ

Վերցրէք մօտակայ դեղատնից կամ դեղապահեստից «Դ-ր Մէյէրի Ստօմօկսիդէնից» մի արկղիկ 75 կոպէկով և ընդունէք 2-ական տաբլէտկա օրական 3 անգամ մինչև որ Ձեր մարսողութիւնը կը կանոնաւորվի։

(П. 18974)

ՏՐՎՈՒՄ ԵՆ ՎԱՐՁՈՎ

◆◆ ՓՈՒՌԸ, ԽԱՆՈՒԹՆԵՐ և ԲՆԱԿԱՐԱՆ

3 սենեականոց իր պատկանելիքներով։ Միքայէլեան փողոց, № 165, հարցնել յանապանին։ 59. 1—1

ՀՕՆՕՐՐԷԻ (ՏՐԻՊՊԵՐ) ԴԷՄ
ՆՈՐ ՄԻՋՈՑ
„SALO—ՊԻՉԻԼԻՆ“

Ներգործում է արագ և արմատականապէս, և բժիշկների վկայութեամբ համարվում է իբրև հաստատուն միջոց։ Գործադրելու ձեռնարկը կցվում է արկղիկին։ Իսկականը միայն արկղիկներում, հատը՝ 1 ր. և 1 ր. 80 կ.։

Միաժամանակ լաւ է ներգործում թէ սուր և թէ յարատև բնոյթ ունեցող դէպքերում և կարճ ժամանակի ընթացքում վերացնում է ամենայամառ ընթացք։

ՊԱՀԵՍՏԸ՝ Петербургъ, Разъѣзжая ул., № 7, аптека В. Конгейма.

Ուղարկվում է վերադիր վճարով։ Ճանապարհածախքը պօստային սակագնով։

Գտնվում է Կովկասեան Ընկերութեան Դեղային Ապրանքների վաճառանոցում։

(Հ.) 52—3

Высочайше Утвержденное Русское Общество Пароходства и Торговли, учрежд. въ 1856 г.

ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ.

Ձմերային երթեւեկութիւն

ՂՐԻՄ-ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԻԾ

Մեկնում են Բաթումից

I Պօստային-մարդատար շոգենաւեր.
Երեքշաբթի ժամի 1-ին գիշերը, շրջանակի գծով
Հինգշաբթի » 1 » » »
Ուրբաթ » 12 » ուղղակի »
II Մարդատար շոգենաւեր.
Երկուշաբթի ժամի 2-ին ցերեկը, շրջանակի գծով
Ուրբաթ » 2 » » »
III Մարդատար-ապրանքակիր շոգենաւեր.
Երեքշաբթի կէս գիշերին, շրջանակի գծով.
Ուրբաթ » » » »

Ժամերը Պետերբուրգի են։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՓՕՍՏԱՅԻՆ ԳԻԾ

Կանոնաւոր հաղորդակցութիւն դէպի Ալէքսանդրիայի, [illegible], Մակեդոնիայի, Սերբիայի, Անատօլիայի, Պարսից-Ծոցի (Персидскій заливъ) գծերի բոլոր նաւահանգիստները։

ԲԱԼՏԻԱԿԱՆ ԳԻԾ

Կանոնաւոր հաղորդակցութիւն ուղղակի Պետերբուրգ-Րիգա, Լիբավա և Րէվել։

Տոմսակները կարելի է գնել Թիֆլիսի գրասենեակում Սօլօլակեան փողոց, № 8.

Հեռախօս № 11.

Ընդունվում են եւ ապահովագրվում են ապրանքներ ձեռնտու պայմաններով։

Գործակալ՝ Ս. Խ. Սուլխանեանց

(Հ.) 0—84

Չափահասների համար

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

Բժշկ. Ֆէլշէր Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆԻ

1) «Գաղտնի հիւանդութիւնների բժշկարան» (կանանց և տղամարդկանց վեներական և այլ ցաւեր), բազմաթիւ բժշկութիւններով, հրահանգներով և նկարներով։ Անհրաժեշտ բժշկարան է ամեն մի չափահաս մարդու համար, նամանաւանդ այնտեղ, որտեղ չը կան մասնագէտ բժիշկներ։ Լեզուն շատ պարզ ու ամենքին հասկանալի։ Գինն է 50 կ.։
2) «Տրիպէր (սուսանակ) եւ նրա բժշկութիւնը» [illegible], բազմաթիւ խորհուրդներով ու նկարներով։ Գինն է 20 կոպ.։
3) «[illegible]», խիստ ծիծաղաշարժ վօդէվիլ միմիայն չափահասների համար։ Գինը 20 կ.։
4) «[illegible]» յայտնի վօդէվիլը, շատ ծիծաղաշարժ. 2-րդ հրատարակութիւն։ Գինը 20 կ.
5) «Հայ կտրիճներ», պատմուածք հայ-Թուրքական կռիւներից. հայ քաջերի կռիւը։ Գինը 7 կ.։
6) «[illegible]», պատմուածք հայ-Թուրքական կռիւներից. գեղեցիկ նկարներով։ Գինը 7 կ.։
7) «[illegible]» Պիմենովից թարգմանած։ Գինը 5 կ.։

Ուղարկվում են բոլոր գրքերը միասին (հատ-հատ ուզողները դիմեն «Գուտեմնբերգ» գրախանութին)։ Պահանջողները պէտք է առաջօք ղրկեն գրքերի գինը մարկաներով։ Հասցէն՝ Тифлисъ, Семеновская ул., № 9. Медицинскому фельдшеру А. Г. Есаянцу.

(Օ. Մ.) 44. 100—3

Հայ Գրողների Կովկասեան Ընկերութեան Վարչութիւնը խնդրում է իր բոլոր անդամներին, որ ուղարկեն Վարչութեանս իրանց մանրամասն և ճիշդ հասցէները և նուիրեն Ընկերութեանս գրադարանին իրանց առանձին գրքերով լոյս տեսած աշխատութիւնները։

(օ. մ.) 58. 3—2

Ներսիսեան Հայոց Հոգևոր Դպրոցի Հոգաբարձութիւնը սրանով յայտարարում է ի գիտութիւն, որ նա վաճառում է նոր կառուցած դպրոցական շէնքի մօտ դպրոցապատկան հողաբաժինները։ Վճարքը կատարվում է կանխիկ կամ 5 տարվայ ընթացքում մաս մաս 7% վերադիր յաւելումով։

Վերջնական գները և մակարդակը, քաղաքային վարչութեան կողմից հաստատված, կարելի է տեսնել հոգաբարձութեան դիւանատան մէջ ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից։

(օ.մ.) 51. 10—3

Վ. Լիսիցեան եւ Ընկ. Առեւտ. Տան Փոխ. Բաժանմունքը

ՏԵՂԱՓՈԽՎԵԼ Է

Լօրիս-Մելիքեան փողոցի վրա գտնվող № 8 սեփ. տունը (անկիւն Մուշտէյդի նրբափողոցի)։

Տելեֆօն № 7—70.

Ի տեղեկութիւն բաժանմունքի կլիէնտների յայտնվում է, որ օպերացիաների ընդարձակումը ի նկատի առնելով՝ պարապմունքի ժամերը ներկայ յունվարի 18-ից երկարեցված են, այն է՝ փոխատուութիւնները և յետ գնումները կատարվելու են առաւօտեան ժամը $9^1/_2$-ից մինչև ցեր. ժ. $1^1/_2$-ը, իսկ մնացեալ օպերացիաները՝ մինչև ցեր. ժ. 2-ը։

(Հ. Հ.) 41. 3—3

Առեւտրի եւ Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրէնութեան ներքոյ գտնվող

Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԿՈՒՐՍԵՐՈՒՄ

Թիֆլիս, Միխայէլեան պր. 24/4. Տելեֆօն № 976.

Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն։

Դասընթացքն աւարտողներին տրվում են ատտեստատներ։

Գործնական պարապմունքները կատարվում են կուրսերում՝ Լօնդօնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձևով կազմակերպված Muster-Comptoir-ում։ Նիւթերն առնվում են բէալ կեանքից։ Առարկաներն են. ա) պարտադիր. 1) Հաշւապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկական, բանկային և գործարանական). 2) Առևտրական թւաբանութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն). 5) Առևտրական թղթակցութիւն. 6) Թւաբանութիւն համրիչի վրա. 7) Վայելչագրութիւն, արագագրութիւն (ամենավատ ձեռքի ուղղումն). բ.) ոչ-պարտադիր. 1) Օտար լեզուներ. 2) Սղագրութիւն. 3) Դակտիլօգրաֆիա (ռեմինգտօն և այլ. և 4) Առևտր. թղթակցութիւն օտար լեզուներով։ Պարապմունքները կատարվում են և դաս-դաս։ Ունկնդիրների թւի շատութեան պատճառով բացվում է երկրորդ զուգընթաց բաժանմունք, որը մանաւանդ յարմար է օտարաքաղաքացիների համար։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը յունվարի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը առ. ժամը 10—12-ը և երեկ. 4—7-ը։ Ծրագիրը և կանոններն ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքում։ Կուրսերը ֆիրմաներին յանձնարարում են հաշւապահներ, օգնականներ և առևտր. այլ ծառայողներ՝ կուրսերի ընթացաւարտներից և իրանց ընդունակութեամբ աչքի ընկնողներից։ (Ընթացիկ տարում կուրսերն ունեցել են 228 ունկնդիր, որոնցից 42 հոգի իգական սեռից)։

Կուրսերի հիմնադիր՝ առևտր. գիտութեան կանդիդատ՝ Տ. ՓԻԼՕՅԵԱՆ

(Ա. Օ.) 376. 0—37

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный